Azg
Ազգ
14 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2004 ՇԱԲԱԹ 181 (3112)

«Երեւանի օր» տոնակատարությունների մեկնարկը

ԵՐԵՎԱՆ, 13 ՀՈԿՏԵՄԲԵՐ: Այսօր Օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում հանդիսավոր նիստով սկսվեցին «Երեւանի օր» տոնակատարությունները: Նիստին պատշաճաւոր առաջին անգամ Հայաստանի սիմֆոնիկ նվագախմբի եւ պետական ակադեմիական երգչախմբի կատարմամբ հնչեց Երեւանի հիմնը, ներս բերվեցին խաղաղի դրոշն ու զինանշանը: Վ. Մամիկոնյանի արձանի հարակից տարածում կազմակերպվեցին սպորտային մրցույթներ, համերգային ծրագրեր կազմակերպվեցին նաեւ Օղակաձեւ այգում, Կիրովի անվան զբոսայգում, Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը:

Տնտեսական ֆորումն իսկապես եւ՛ հայկական էր, եւ՛ միջազգային

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Երեկ Համաշխարհային հայկական կոնգրեսի (ՀՀԿ) եւ Ռուսաստանի հայերի միության (ՌՀՄ) օրերի շրջանակներում բացվեց Հայկական միջազգային տնտեսական ֆորումը: Այն բացեց ՀՀԿ նախագահ Արա Աբրահամյանը, իր ելույթում անդրադառնալով կոնգրեսի եւ տվյալ ֆորումի հիմնական նպատակներին: Այնուհետեւ ողջույնի ելույթով հանդես եկավ Հայաստանի վարչապետ Անդրանիկ Մարգարյանը: Նա այս ֆորումն առանձնահատուկ համարեց, քանի որ մասնակցում են ոչ միայն հայ, այլեւ բազմաթիվ օտարազգի գործարարներ:

Երեւանում բացված միջոցառմանը ողջույնի խոսք էր հղել նաեւ Ռուսաստանի վարչապետ Միխայիլ Ֆրադկովը: Այն ընթերցելուց հետո հայ-ռուսական տնտեսական հարաբերություններին եւ դրանց զարգացման խոչընդոտներին անդրադարձավ Ռուսաստանի տրանսպորտի նախարար Իգոր Լեւիտինը: Նա նշեց, որ ադրանքաշրջանառության ծավալները երկու երկրների միջեւ կազմում են մոտ 200 մլն դոլար: Այս տարվա առաջին կիսամյակին դրանք ավելացել են 5 տոկոսով: Հայաստանում անցյալ տարվա ընթացքում կատարված ռուսական ներդրումները կազմել են 68 մլն դոլար, որը կազմում է ընդհանուր ներդրումների 44 տոկոսը: Իսկ վերջին տարիներին կատարված ռուսական ներդրումների ընդհանուր արժեքը գերազանցում է 230 մլն դոլարը:

Երկկողմ տնտեսական հարաբերությունների զարգացմանը խոչընդոտող գլխավոր հանգամանքը Իգոր Լեւիտինը համարեց Հայաստանի հետ Ռուսաստանի ընդհանուր սահմանի բացակայությունը եւ Հայաստանի տրանսպորտային մեկուսացվածությունը: Նա տեղեկացրեց, որ այս համաժողովից հետո մեկնելու է Ադրբեջան, ապա Վրաստան եւ այնտեղ կոչ է անելու, որ բացեն բոլոր ճանապարհները: Ռուսաստանի տրանսպորտի նախարարը նշեց նաեւ, որ ճանապարհների փակ լինելու պատճառով 15 մլն տոննա բեռներ չեն մտնում տարածաշրջան եւ անցնում են այլ երկրներով:

Տես էջ 3

ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Ադրբեջանն Արցախին անկախություն չի տալու

Ի՞նչ է անելու Հայաստանը

Այս հարցով մտահոգված է Արամ Սարգսյանը եւ տագնապում է Արցախի հիմնախնդրի գործընթացի համար: Նա նաեւ առաջարկում է Արցախի խնդրում մեկ միասնական դիրքորոշում մշակելու նպատակով խորհրդարանական փակ լսումներ կազմակերպել: Արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանը, համաձայնելով լսումների անհրաժեշտությանը, ի պատասխան հայտնեց, որ մտահոգության եւ տագնապի հիմքեր ինքը չի տեսնում, քանի որ հայրենական դիվանագիտական օղակները լիովին կարողանում են առաջ տանել ՀՀ ծրագիրն Արցախի հիմնախնդրի առնչությամբ եւ այսօր այդ ուղղության զարգացումները մեզ համար դրական հունի մեջ են: Դա նկատելու համար պետք է ուշադրությունը կենտրոնացնել ոչ թե ադրբեջանական, այլ հայկական կողմի հավաստիացումների վրա, գտնում է Օսկանյանը եւ պնդում, որ «Ղարաբաղն արդեն մերն է, եւ եթե այդ պրոցեսում որեւէ մեկը որեւէ բան պետք է տա, ապա մենք պիտի տանք: Այդ առումով մեր հայտարարությունն ավելի ծանրակշիռ է: Ղարաբաղն անկախ է եւ երբեք Ադրբեջանի կազմում չի լինելու»:

Որպես դրական տեղաշարժերի ապացույց, արտգործնախարարը մատնանշեց հիվեսության գործընթացը, ընդհանուր պետության առաջարկը եւ այսօր միջազգային հանրության մեջ գերակշռող տրամադրությունները, որոնց համաձայն հանգիստ են նայում Ադրբեջանի կազմում Ղարաբաղի չլինելուն: Սա, իհարկե, չի նշանակում, թե միջազգային հանրությունն այդ մասին հրապարակավ պետք է հայտարարի, բայց փաստ է, որ ՀՀ-ի վրա Արցախի հիմնախնդրի այս կամ այն ձեւով լուծման համար որեւէ ճնշում չկա, եւ այսօր ՀՀ արտաքին գերատեսչությունը կարողանում է իրականացնել այն, ինչ նախագծել է երկրի նախագահը:

Ն. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Բեսլանի զոհերի թվում հայերի 3 նոր անուններ

Երեկ Ռուսաստանի տարածքում նշվում էր Բեսլանի ահաբեկչության զոհերի հառաջումը: Այդ ընթացքում Ռոստովում կատարված գենետիկական հետազոտության արդյունքում բացահայտվեցին զոհերի 7 նոր անուններ, որոնցից 3-ը՝ հայեր: Նրանք են՝ Գրիգորյան Նաինա Յուրիկի (1976 թ. ծնված), Գրիգորյան Մարինուե Գագիկի (1996 թ.) եւ Գրիգորյան Մելինե Գագիկի (1994 թ.):

Մտավորականները «Եհովայի վկաներ» աղանդի գրանցումը համարում են «խայտառակություն, հակաազգային քայլ»

Ժողովրդական դերասան Սոս Սարգսյանը ՀՀ արդարադատության նախարարությունում «Եհովայի վկաներ» աղանդի գրանցումը համարում է խայտառակություն, հակաազգային քայլ: «Իմ կարծիքով, արվում են քայլեր, որոնք մեզ զրկում են մեր ինքնությունից: Դրանք (Եհովականները) չար ուժեր են, նրանց նպատակը հայության ինքնությունը, ազգայինը վերացնելն է, հայ առաքելական եկեղեցու հիմքերը քանդելը», մեզ հետ հեռախոսազրույցում ասաց Սարգսյանը:

Գրող, հրապարակախոս Պերճ Զեյթունցյանը Եհովականներին համարում է ամենավտանգավոր աղանդներից մեկը: «Այն մարդիկ, ովքեր դառնում են աղանդավորներ, դեմ են գնում ազգային ավանդույթներին եւ, իմ պատկերացմամբ, ազգային դավաճաններ են: Երբ պետք է մեր մեջից դուրս գա Եվրոպային, ԱՄՆ-ին, Ռուսաստանին հաճոյանալու մարմաջը: Եթե Ֆրանսիան կարող է ջնջել այդ աղանդի գրանցումը, ապա ինչո՞ւ մենք չենք կարող», ասաց Զեյթունցյանը:

Հայաստանում «Եհովայի վկաների» առաջնորդ Հրաչ Քեչիշյանը «վկա» է 1984 թ. ի վեր: Նրա ասելով, Հայաստանում մկրտված Եհովականների թիվն անցնում է 8 հազարից, իսկ համակիրների հետ՝ ավելի քան 20 հազարից: Մեզ հետ հեռախոսազրույցում Քեչիշյանն իր կազմակերպությունը գրանցելու առումով մեկ առանձնահատկություն կարետրեց:

Տես էջ 3

Հունվարից հավանական է դեղորայքի թանկացում

Նախ ընդամենը մեկ ամսից հունական արտադրության դեղերը կթանկանան: Այդ մասին մեր ներկրողներին արդեն զգուշացրել են հույն դեղատարադրողները: Բանն այն է, որ Եվրոմիության բոլոր երկրները որոշել են դոլարով առուվաճառից կտրուկ անցում կատարել դեպի եվրո: Դա նշանակում է, որ եվրոյի եւ դոլարի միջեւ փոխարժեքային տարբերության հաշվին (500 եւ 625 դրամ), շղթայական ռեակցիայի օրենքով, Հայաստանում դեղերը մոտ 20 տոկոսով կթանկանան:

Դեղագործական շուկայի մասնավորեցումից հետո դեղորայքի 60-70 տոկոսը ներկրվում է դրսից, հիմնականում եվրոպական երկրներից: Հունվարից արդեն եվրոպական բոլոր երկրներում տնտեսական գործառույթները, այդ թվում նաեւ ներկրողների հետ հարաբերությունները կարգավորվելու են եվրոյով: Այս մասին մեր ներկրողներն, իհարկե, արդեն գիտեն:

Դեղորայքի շուկայում նման ցնցումները կարող են ծնել նաեւ անթույլատրելի իրողություններ: 30-40 տոկոս սպեցիֆիկ ոլորտների պայմաններում անհավանական չէ, որ ներկրողները հավելյալ շահույթից չզրկվելու համար թարգմանեն դեղերը եւ շուկա հանեն արդեն բարձր գներով: Դա նշանակում է, որ ժամկետանց կամ սպառման ժամկետին մոտեցած դեղերի քանակը հունվարից հետո կավելանա սպառման շուկայում:

Կ. Դ.

«Կովկասում ՆԱՏՕ-ի ակտիվությունը չպետք է անհանգստացնի Մոսկվային»

Նոյեմբերի սկզբին Հայաստան է ժամանելու դաշինքի գլխավոր քարտուղարը

ՆԱՏՕ-ում ԱՄՆ դեսպան Նիկոլաս Բարնսը «Մեդիամաքս» գործակալությանը տված բացառիկ հարցազրույցում հայտարարել է, որ «ՆԱՏՕ-ի հատուկ ուշադրությունը Կովկասի նկատմամբ չպետք է անհանգստություն առաջացնի Մոսկվայում»: «ՆԱՏՕ-Ռուսաստան խորհրդի շնորհիվ դաշինքի անդամները եւ Ռուսաստանը պատրաստում են մեր ընդհանուր շահերը եւ դիմակայում ընդհանուր սպառնալիքներին: Այս աշխարհամասի նկատմամբ ՆԱՏՕ-ի հատուկ ուշադրության պատճառը գիտակցումն է, որ այդ տարածաշրջանի երկրների հետ մենք բախվում ենք անվտանգության ընդհանուր այնպիսի սպառնալիքների, որոնց մեծ մասն ի հայտ է գալիս Եվրոպայի սահմաններից դուրս: Ռուսաստանը նույնպես բախվում է այդ սպառնալիքներին, եւ նա կարող է միայն շահել ՆԱՏՕ-ի աշխատանքից այս ոլորտում», ասել է Բարնսը:

«Էական տարբերություններ կան ՆԱՏՕ-ի եւ Ռուսաստանի զինված ուժերի ու պաշտպանական կառույցների կազմակերպման ձեւերում: Եթե Հայաստանը ցանկանում է էապես բարելավել իր համաձայնությունը ՆԱՏՕ-ի հետ, նա սիրված կլինի արդիականացնել այդ կառույցներից մի քանիսը: Այսպիսով կան գործնական հարցեր, որոնք կարող են համոզել ձեր կառավարությանն ավելի սերտորեն հայացք գցել Հայաստանի զինված ուժերի ապագա կառուցվածքին», ասել է Բարնսը:

Տես էջ 5

ՀՈՒՆ ԼԱՎ Է

Գլենդելում հայերը հայ բռնցքամարտիկի են սպանել

ԳԼԵՆԴԵՅԼ, 13 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Գլենդելի ոստիկանական իշխանությունները հոկտեմբերի 11-ին հաղորդել են, որ մի վեճի ընթացքում սպանվել է Արսեն Այվազյան անունով 30-ամյա արհեստավարժ հայ բռնցքամարտիկ՝ «Հայ Ռոկի» մականունով: Ենթադրվում է, որ այս սպանությունն էլ կազմակերպված հանցավոր խմբերի միջեւ հաշվեհարդարների արդյունք է:

Ըստ ոստիկանության տվյալների, բանավեճի ընթացքում դիմացինները հայերենով վիճաբանում էին Այվազյանի հետ, երբ Այվազյանը բռունցքի հարված է հասցրել իր վրա գոռացողներից մեկին: Այդ ժամանակ վերջինս գրպանից հանել է ատրճանակը եւ երեք անգամ կրակել Այվազյանի կրծքին: Կրակոցից հետո ոճրագործները փախել են երեք տարբեր ավտոմեքենաներով: Կիրակի առավոտյան ոստիկանությունը գտել է այդ մեքենաներն ու հարցաքննել դրանց տերերին, սակայն հետո ազատ է արձակել:

Այվազյան ընտանիքը բնակվում է Տեխաս նահանգի Ֆորթ Ուորթ քաղաքում: Ընտանիքի անդամները մեծ ցնցում են ապրել, երբ տեղեկացել են լուրը: Նրանք ասել են, որ Արսենը սիրում էր ինքն իրեն «Ռոկի» կոչել, որովհետեւ շատ էր սիրում բռնցքամարտը: Արսենի մեծ եղբայրը՝ 31-ամյա Անդրանիկ Այվազյանը, հայտնել է, որ եղբոր մահը մեծ կորուստ է: Նրանք իրարից երբեք չէին բաժանվում, շատ էին սիրում իրար:

Այվազյանն իր ընտանիքի անդամների հետ Երեւանից արտագաղթել էր Չեխոսլովակիա, այնտեղից էլ Միացյալ Նահանգներ: Նրանք բնակություն են հաստատել Ֆորթ Ուորթում, ուր Արսեն Այվազյանն արհեստավարժ բռնցքամարտիկի արտոնագիր է ստացել 1997 թ.: Մարզվել է աշխարհի չեմպիոն Այալայի հսկողության ներքո: Նրա մարզիչներից մեկն ասել է, որ Արսենը լավ բռնցքամարտիկ էր եւ իսկապես էլ նմանվում էր Ռոկիին: Բռնցքամարտին առընթեր նա տարբեր այլ գործերով էլ էր զբաղվում. ծառայում էր ճաշարաններում, հեռախոսագրքեր էր վաճառում եւ այլն: Սակայն նրա մարզիչը համոզմունք է հայտնել, որ Արսեն Այվազյանը չէր կարող մասնակցել կազմակերպված հոսակախմբերին:

ԸՆԹԱՑԻԿ

ԱԺ օրակարգի շուտ սպառումը խաղաքաղաքական ճգնաժամի հետեւանք չէ

Գնահատում է ՀՀ վարչապետը

Խորհրդարանական ընթացիկ եռօրյայի օրակարգը այլակարծության լիակատար բացակայությամբ սպառվեց ժամանակից շուտ՝ 13:30-ին: Վերջերս կրկնվող այս փաստը թույլ է տալիս եզրակացնել, որ խորհրդարանը մոտենում է սեփական ուժերին համապատասխան ծանրածողին ու բարձրացնում՝ օրակարգային ավելցուկ չթողնելով, խվեարկություններն էլ եռօրյայից եռօրյա տեղափոխելով: Վարչապետի կարծիքով, նշվածը բնական է, քանի որ ԱԺ-ն պետք է աշխատի եղած խնդիրների շուրջ եւ բոլորովին պարտադրված չէ ողջ աշխատանքային օրը լրացնել օրակարգային հարցերի քննարկմամբ, ու դա չպետք է դիտարկել որպես քաղաքական ճգնաժամ: Բացի այդ, ի վերջո կառավարության եւ խորհրդարանի խնդիրը իրավական, քաղաքական դաշտը կայուն պահելն է ու բոլորովին էլ նպատակահարմար չէ նույն օրենքում հաճախակի փոփոխություններով խաղի կանոնները փոխել, գտնում է Անդրանիկ Մարգարյանը:

Իսկ այս եռօրյայում անհարգելի բացակայած պատգամավորների՝ խորհրդարանական ընդդիմադիրների հարցը չքննարկելու պատճառը չի փոխվել: Այս անգամ էլ պատգամավորներին ԱԺ նախագահը չի զգուշացրել 7 օր առաջ: Նշված հարցի քննարկումը հնարավորինս հետաձգվում է: Խորհրդարանական հանրապետականների ղեկավար Գալուստ Սահակյանն, օրինակ, այդ հարցը չի կարետրում, քանի որ ներկայումս խորհրդարանի աշխատանքներին ընդդիմության մասնակցության խնդիրը քաղաքական տեսակետից այնքան սուր չէ, որքան, ասենք, սեպտեմբերին:

Խորհրդարան-կառավարություն հարցուպատասխանից պարզվածը

ԱԺ պատգամավորները կառավարությանն ուղղված հարցերով երեկ պարզեցին, որ կառավարության որոշմամբ վերականգնվել են 26 նախնական եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ (նախկին՝ ՊՏՈՒ), այժմ էլ ուսումնասիրություններ են կատարվում՝ պարզելու, թե ինչ մասնագետների պակաս կա Հայաստանում: Ուսումնական ծրագրի վերաբաշխմամբ էլ փորձում են թուլացնել տարական դասարանների ծանրաբեռնվածությունը, որ ժառանգվել է խորհրդայինից ժամանակակից դպրոցի անցման այս փուլում:

Տավուշի մարզի սողանքից տուժած 270 մետր ճանապարհը կնորոգվի 2005 թ.: Գետերի գարնանային վարարման պատճառների վերացման նպատակով էլ Գավառի տարածքում կանխարգելիչ միջոցների առաջին նախագծային աշխատանքը 105 մլն դրամ արժողությամբ արդեն կատարված է, երկրորդը դեռ ընթացքում է: Ծրագիրն իրականացվելու է ճապոնական կառավարությունից ստացած դրամաշնորհով (286 մլն դրամ): Սակայն, գյուղատնտեսության նախարարի հավաստմամբ, մեծ դժվարություն կա, քանի որ գետի ափամերձ տարածքներն արդեն զավթված են եւ չափազանց դժվար կլինի սեփականատերերի հետ լեզու գտնելը:

Ավետիք Իսահակյանի անվան քաղաքային գրադարանը, որ պատկանում է քաղաքապետարանին, «Յունիբանկից» առաջարկ է ստացել տարածքը լքելու՝ քաղաքի մեկ այլ հասվածում նոր շենքի կառուցման պայմանով: Սակայն թե՛ գրադարանի 31 հազար բաժանորդները, թե՛ տնօրինությունը մերժել են առաջարկը: Վարչապետի հավաստմամբ, քաղաքապետը դեռեւս գրադարանի շենքը բանկին տրամադրելու որոշում չի կայացրել եւ չի էլ կայացնի, եթե գրադարանի տնօրինությունը չենթարկվի վարչական ճնշումների եւ փոխի իր որոշումը: Այդ դեպքում վարչապետը կկարողանա սատարել ընթերցողներին եւ տնօրինությանը: Ցնայած ժամանակակից պայմաններով նոր շենք գրադարանին տրամադրելը վարչապետը շահեկան է համարում:

ՀՀ տնտեսությունը կախված է ՌԴ անվտանգությունից

Կառավարություն-խորհրդարան հարցուպատասխանին հետեւած լրագրողների հետ զրույցում վարչապետը հավաստիացրեց, որ սահմանի փակմամբ ՌԴ-ն ամենեւին նպատակ չունի ՀՀ-ին քաղաքացիական դաս տալու, տնտեսությանը վնասելու: Այստեղ անվտանգության եւ Վրաստանի հետ Ռուսաստանի ունեցած հարցերի լուծման խնդիրն է: Արդյունքում տուժում է մեր երկիրը: Վարչապետի կարծիքով, անընդունելի է Հարավային Օսիայով առաջարկվող ճանապարհը, քանի որ անվտանգության երաշխիքներ չկան: Իրանի ճանապարհն այսօր, Անդրանիկ Մարգարյանի համոզմամբ, միակ այլընտրանքային ճանապարհն է, որի ամբողջական գործարկումը, սակայն, երկար ժամանակ է պահանջելու:

Իրավ հումանիտար օգնություն ցուցաբերելու հայ 50 մասնագետների (վարորդներ, բժիշկներ, սակրավորներ) ստորաբաժանումն ուղարկելու հարցը վերջնական պատասխան ստանալու է սահմանադրական դատարանի եւ խորհրդարանի կողմից, սակայն վարչապետը երեկ հայտնեց, որ այդ հարցում տրված նախնական համաձայնությանը նպաստած հանգամանքները փոփոխվում են նաեւ Միացյալ Նահանգների դաշնակից երկրների փոփոխման կտրվածքով: Վարչապետը հայտնեց, որ իշխանական շրջանակներում էլ եւ անձամբ իր կողմից մտահոգություն կա, որ ստորաբաժանումն ուղարկելը կարող է ՀՀ-ն վերածել ահաբեկչության թիրախի:

Ներքաղաքական կտրվածքում վարչապետը ճգնաժամ չի տեսնում, եւ վերջերս խորհրդարանում տեղի ունեցած հայհոյախառն պարզաբանումներն ու պատգամավորի տան վրա զինված հարձակումը բոլորովին էլ կոալիցիոն ուժերի բախում չեն նշանակում եւ անձնական բնույթի են:

«Եհովայի վկաների» գրանցման մասին

ՀՀ-ում գրանցված մի քանի տասնյակ աղանդների շարքում օրերս նաեւ եհովականների հայտնվելն Անդրանիկ Մարգարյանը համարում է այդ աղանդը ՀՀ օրենսդրական դաշտ բերելու եւ պատասխանատվության կանչելու հնարավորություն: Մասնանշելով բոլոր աղանդների վտանգավորությունը մեր հասարակության համար եւ ընդգծելով, որ «Եհովայի վկաների» գրանցման հարցում աշխատել են հոգեւորական բարձրաստիճան դասի հետ: Վարչապետը պատգամավորներին հուշեց, որ այդ եւ մյուս բոլոր աղանդների դեմ հիմնավոր պայքարելու համար հարկավոր է հավաքել նրանց թույլ տված ՀՀ օրենքներին դեմ գործողությունների փաստեր, խստացնել համապատասխան օրենսդրությունը:

Ն. Պ.

ՍՅՈՒԵԻՔ

Մահակի դեմ՝ մահակով

Ծեծել են «Սյունյաց մարզ» թերթի խմբագրին

Երեկ **«Ազգի»** խմբագրությունը հաղորդագրություն ստացավ «Սյունյաց երկիր» մարզային թերթի խմբագրության աշխատակազմից, որի համաձայն նույն, ժամը 11-ի սահմաններում հարձակում է կատարվել շաբաթաթերթի խմբագրի վրա: Ըստ հաղորդագրության՝ հարձակվողները «Սյունյաց արծիվներ» հասարակական կազմակերպության նախագահ Խաչիկ Ասրյանը եւ եւս երկու երիտասարդ էին, երեքն էլ մահակներով զինված: Շաբաթաթերթի խմբագիր Սամվել Ալեքսանյանը «Ազգի» հետ հեռախոսազրույցում ասաց, որ կազմակերպությունը Հայաստանի հանրապետական կուսակցության երիտասարդական թեւն է: Ըստ խմբագրի՝ հարձակման պատճառ է դարձել վերջերս «Սյունյաց երկրում» տեղ գտած մի քանի հրապարակում՝ Գորիսում եւ Կապանում երկու հանրակրթական դպրոցների փակման եւ երկու քաղաքների ինստիտուտներում ընդունելության քննությունների աննրությունների մասին: Թերթի խմբագրի գնահատականով՝ դրանք նորմալ հրապարակումներ են եղել: «Ասում էին՝ ինչո՞ւ է թերթը հանրապետության վարչապետի եւ Սյունիքի մարզպետի մասին քննադատական նյութեր հրապարակել, ես էլ ասում էի, որ դա իրենց չի վերաբերում: Այդ ժամանակ նրանցից մեկը կոստյումի տակից հանեց փայտե մահակը եւ սկսեց հարվածել ինձ՝ սպառնալով, որ եթե շարունակենք նման նյութեր հրապարակել, կհրկիզեն խմբագրությունն ու իմ մեքենան», պատմեց պրն Ալեքսանյանը:

Փաստի մասին գլխավոր խմբագիրը տեղյակ է պահել Կապանի ոստիկանությանը, հարուցվել է քրեական գործ: «Ազգի» այն հարցին, թե արդյոք դատական բժիշկը հետազոտե՞լ է տուժածին, եւ եթե այո, ապա ի՞նչ եզրակացություն է տվել, տուժածը պատասխանեց. «Այո, իրենք իրենց գործը նորմալ են կատարել: Սակայն ես հետազոտության արդյունքներով չեմ հետաքրքրվում»:

Սամվել Ալեքսանյանը նաեւ նախագահ է հղել հանրապետության նախագահին, գլխավոր դատախազին, ԵԱՀԿ երեւանյան գրասենյակին: «Եթե իրավապահ մարմինները գրոհայիններին չպատժեն, ինքներս մեզ կպաշտպանենք ընտրելով նույն՝ մահակների տարբերակը, ասաց խմբագիրը: Թերթը աշխատելու է նույն ձեւով եւ մտադիր չէ փոխել իր ուղին»:

Այժմ տպագրության են պատրաստվում թերթի հերթական երկու համարները, որոնք գովազդային են: Դրանց տպագրությունից հետո խմբագիրը մտադիր է առանց խափանման հրատարակել շաբաթաթերթի հաջորդ համարները:

Ի դեպ, «Սյունյաց արծիվներ» հասարակական կազմակերպության փոխնախագահ Էդգար Հովհաննիսյանը հաստատեց, որ կազմակերպությունը ՀՀԿ երիտասարդական թեւն է, կազմակերպության նախագահը Խաչիկ Ասրյանն է, սակայն «Ազգի» այն հարցին, թե ինչ կապի հաղորդագրության մասին, պատասխանեց. «Մենք հասարակական կազմակերպություն ենք եւ խուլիգանությամբ չենք զբաղվում: Չգիտեմ՝ ով է նման հայտարարություն արել»:

Ռ. Մ.

Իսրայելցի հայ լեռնագնացը Արագած լեռը բարձրանալիս գլորվել է ու մահացել

ԱԻՎ լրատվական կենտրոնից տեղեկացանք, որ հոկտեմբերի 12-ին Արագածոտնի մարզի Արագած գյուղի բժշկական կենտրոն ահազանգ է ստացվել Իսրայելի քաղաքացի, Մալեադոլմե քաղաքի բնակիչ, 1980 թ. ծնված Նաթալյա Դանգայից, որը տեղեկացրել է, որ Ապարանի տարածաշրջանի Արագած գյուղի մոտից Արագած լեռը բարձրանալիս, ժամը 17:00-17:30-ի սահմաններում, մոտ 15 մետր բարձրությունից Մարիա Տեր-Իփիլիկյանը ընկել է քարերի վրա: Դեպքի վայր մեկնած Արագածոտնի արագ արձագանքման փրկարարական ջոկատի IV խումբը եւ մարզային փրկարարական ջոկատը ձորից հանել են 1989 թ. ծնված Իսրայելի քաղաքացի, Ռեխովոտ քաղաքի բնակիչ Մարիա Տեր-Իփիլիկյանի դիակը:

Պպանություն

Ինչպես տեղեկացանք ՀՀ ոստիկանության հասարակայնության հետ կապի եւ լրատվության վարչության տրամադրած օպերատիվ տեղեկագրից, հոկտեմբերի 12-ին ոստիկանության Գյումրու բաժին հիվանդանոցից հաղորդվել է, որ կրծքավանդակի մասում սուր կտրող-ծակող գործիքից ստացած վնասվածքով իրենց մոտ է տեղափոխվել 1984 թ. ծնված Ալիկ Մխեյանը, որը հիվանդանոցում մահացել է: Պպանություն կատարելու կասկածանքով ոստիկանության բաժին բերման են ենթարկել 1985 թ. ծնված Գրիգոր Մկրտչյանին: Վերջինս նույն օրը Գարեգին Նժդեհի փողոցի շենքերից մեկի մոտ վիճաբանության ժամանակ դանակահարել է Ալիկ Մխեյանին: Դանակն առգրավված է, Գրիգոր Մկրտչյանը ձերբակալված է, քննությունը վարում է դատախազությունը:

Մ. Մ.

«Մեկ ազգ»-ի էվրիկան

Ազգը փրկելու համար կուսակցությունը որոշել է պատասխանատվության ենթարկել Հայոց համազգային շարժմանը

Կուսակցությունը մտկել է «Քաղաքական պատասխանատվության կանչելու մասին» օրինագիծը, որ «սպառնում» է քաղաքական բոլոր ուժերին, ում աղաշանքի գործողությունները բնակչության վիճակի էլ ավելի վատացման պատճառ են դառնում: Ըստ օրինագծի, այդ ուժերը պետք է հեռանան ասպարեզից, իսկ նրանց լիդերները որեւէ արտոնությունից չպետք է օգտվեն: Ակնարկը ամենից առաջ վերաբերում է Հայոց համազգային շարժման առաջնորդ Լեւոն Տեր-Պետրոսյանին, որն այսօր խաղաղ հանգիստ է վայելում:

«Մեկ ազգ» կուսակցությունը «Հայ ազգայնական դաշինքի» հիմնադիր անդամ է, իր շարքերում շուրջ 1600 անդամ ունի եւ մտադիր է, որ օրինագիծն Ազգային ժողովում չխրախուսվի, քարոզչության միջոցով հասարակությանը կոչել դրա իրականացմանը: Այս անսովոր նախաձեռնության դրդապատճառը կուսակցության գաղափարախոսության ակունքներում է՝ կողմնակից են ազգային սոցիալական պետության գաղափարին եւ ոչ այսօրվա «վայրի կապիտալիզմին»: Իրենց համոզմամբ, տնտեսության բոլոր ոլորտներում պետք է գերակայի պետական հատվածը, ռազմավարական նշանակության ձեռնարկությունները պետք է պետության մենաշնորհային դաշտում լինեն՝ «որպեսզի սահմանափակվի օլիգարխների անկուշտ տնտեսական ազատությունը»:

Իրենց գաղափարին կյանք տալը մեկազգականները սկսելու են սոցիոլոգիական հարցումներից: Եթե հասարակությունը մատնացույց անի, թե այս կամ այն քաղաքական ուժը սպառել է իրեն կամ նրա գործողությունների պատճառով «նվազագույն զամբյուղի» պարունակությունը պակասել է, հենց նրա համար էլ հնչելու է վերջին ժամը:

«Եթե օրինագիծը կյանքի կոչվի, արդեն առաջին հերթին ՀՀՇ կուսակցությունը պետք է լուծարվի, իսկ նրա լիդեր Լեւոն Տեր-Պետրոսյանը զրկվի այսօրվա պետական արտոնություններից», երեկ կայացած ասուլիսի ժամանակ հայտարարեց «Մեկ ազգ» կուսակցության նախագահ Գոռ Թամազյանը: Բայց եթե քաղաքական ու պետական գործիչները, հանձին ՀՀՇ-ի, տնտեսվարման արտավոր կուրս սկսել ու շարունակում են 90-ական թվականներից, ինչու հենց հիմա է հնչում «Մեկ ազգ-ի» էվրիկան: Գոռ Թամազյանը դա բացատրում է բարոյահոգեբանական ճգնաժամի խորացման ու հասարակության՝ անխտիր բոլոր քաղաքական ուժերի հանդեպ խոր հիասթափության հանգամանքով: Իրենք պարզապես ուզում են սկսել ՀՀՇ-ին պատժելուց:

Արդյոք սա վերեւներից իջած քաղաքական պատվեր չէ՞, քանի որ իշխանությունները ժամանակ առ ժամանակ հիշում են ՀՀՇ-ի մասին՝ կենդանացնելով նրա ուղվանքը:

«Եթե ՀՀՇ-ն լիներ վառ հայրենասիրական կենսագրությամբ առողջ ուժ, այո, կարելի էր դիտել պատվեր, բայց եթե նա բոլորի աչքի առջեւ ազգային քաղաքականություն է վարել, սա ընդամենը հասարակական պահանջարկ վայելող նախաձեռնություն է», հարցին այսպես պատասխանեց Գոռ Թամազյանը: Իսկ մենք արձանագրենք, որ քաղաքական ռոմանտիզմի այս հանկարծահաս արտահայտությունը հուզիչ է իր պարզամտությամբ: Մեր հասարակությունը ամենից քիչ ունի նման նախաձեռնությունների կարիք: Ազգայնական բարձր գաղափարների ու նախաձեռնությունների առատությունից, որոնք այդպես էլ լոկ գաղափարներ են մնում, առայժմ ոչ մեկի զամբյուղի պարունակությունը չի ավելացել:

ԿԱՐԻՆԵ ԴԱՆԻԵԼՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ժԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
Ֆաքս 374 1 562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵՍՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵՍՆ / հեռ. 529221
Լրագրողների սենյակ / հեռ. 581841
Հանձնարար. ծառայություն / հեռ. 582483
Շուրջօրյա լրահավաք ծառայություն / հեռ. 529353
Հանձնարարչային ծառայություն
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տրպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռարձակութեամբ առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են
համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

Երիտասարդները գլոբալացման, ուծացման եւ այլ վտանգների մասին

10 զինակոչիկներ վերադարձան Հայաստան

Հայաստանի եւ Ռուսաստանի երիտասարդական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ երեկ ԳԱ ակադեմիայի դասմության ինստիտուտի դահլիճում տեղի ունեցավ «Սերունդների երկխոսություն եւ գլոբալացում» թեմայով համաժողովը, որը երիտասարդներին հրաւալի առիթ ընձեռեց արտահայտելու ներկա դահին իրենց առավել հուզող խնդիրները: Երիտասարդական ակումբների դասնության անդամ **Էդգար Հակոբյանի** ասելով՝ համաժողովին մասնակցում էին Ռուսաստանի հայերի միության երիտասարդական կազմակերպության մոտ 20 անդամներ, մոտավորապես այդքան էլ հրավիրվել էին հայաստանյան երիտասարդական կազմակերպությունների ներկայացուցիչներ: «Մենք փորձեցինք դահել համամասնությունը, հիմնականում ներգրավելով այն խաղաղական ուժերին, որոնք մասնաճյուղեր ունեն արտասահմանում, սփյուռքի ներկայացուցիչների դակասն այդ կերդ լրացնելու համար»: Այդտեղերձ, ԳԱ ակադեմիայի դասմության ֆակուլտետի ոչ այնքան մեծ դահլիճը կիսադատարկ էր, ինչն անկեղծորեն զարմացրել էր ոչ միայն ռուսաստանցի հայ երիտասարդներին:

Դասախոս **Սեյրան Զաքարյանը** խոսեց գլոբալացման ընդերքային հարցադրումների մասին, դրանք դիտարկելով դրական ու բացասական տեսանկյուններից: «Համաշխարհային խաղաղական միտքն այսօր մի տեսակ թաքնված է գործում, հետեւաբար անհրաժեշտություն կա բացահայտելու, հետո միայն երկխոսություն սկսել: Այլապես կստացվի, որ մենք գտնվում ենք մի մեխանիզմի ներքո, որն իր գաղափարախոսությամբ զոմբիացման խնդիր է դրել եւ մենք սիրահոժար ընդունում ենք, որովհետեւ կարետրվում է նյութականը, յուրաքանչյուր ոք մտածում է իր առօրյա կյանքի մասին: Գաղափարական եւ հոգեբանական վերլուծությունները հասկանալու եւ վերծանելու ժամանակ նրանք չունեն, թեպետ զգացողությունների մեջ նստած է: Դա պետք է դառնա արթուն միտք, որպեսզի ամեն մեկը բացահայտի գաղափարական եւ հոգեբանական ահաբեկչության բացասական որակները, որոնց ազդեցության տակ ենք այժմ»: Նրա համոզմամբ, հայի տեսակն ունի ինքնակայացման հասնելու բոլոր հատկություններն ու հնարավորությունները, եւ հարձակումներից կարող է պաշտպանվել իր ներդաշնակ աշխարհընկալմամբ, ճանաչողությամբ, մտածողությամբ ու հոգեբանությամբ:

Ռուսաստանի հայերի միության երիտասարդական կազմակերպության անդամ **Արտակ Դավթյանն** արդեն 9 տարի ապրում է Մոսկվայում, իր անձնական փորձով եւ շփումներով համոզվել է, որ հայերը չափազանց շուտ են ուծացվում ռուսական միջավայրում: «Անգամ ռուսերն են զարմանում, որ առանց որոշակի պարտադրանքի օտարները Ռուսաստանում բավականին շուտ են մոռանում իրենց ազգային լեզուն ու ավանդույթները: Այնտեղ ապրում են մոտ 2 մլն հայեր, սակայն միայն կես միլիոնն է իրեն հայ անվանում: Հայերի ուծացման խնդիրը կարիք ունի լայն քննարկման»:

Ռուսաստանի հայերի միության մոսկովյան բաժանմունքի երիտասարդության ներկայացուցիչ, իրավաբան **Գագիկ Առաքելյանը** խոսեց Հայոց ցեղասպանության 90-դ տարելիցին նվիրված միջոցառումների նախապատրաստական աշխատանքների մասին, կարետրելով դրանցում երիտասարդության մասնակցությունը: Նրա կարծիքով, ամենից առաջ անհրաժեշտ է տեղեկատվական կապ հաստատել Հայաստանի եւ Ռուսաստանի երիտասարդական կազմակերպությունների միջեւ: Նա մտադիր է կապ հաստատել Հայոց ցեղասպանության թանգարանինստիտուտի երիտասարդ գիտնականների հետ, քանի որ Մոսկվայի միջազգային իրավունքի ինստիտուտում աշխատում է ցեղասպանության ճանաչման հարցերով զբաղվող պրոֆեսոր Յուրի Բարսեղովի հետ:

Տոլյատի քաղաքի «Կամուրջ» հասարակական կազմակերպության նախագահ **Արտեմ Մինասյանը** Հայաստան է եկել գտնելու իր համար չափազանց կարեւոր հարցերի պատասխանները, նրան մասնավորապես անհանգստացնում է հայ երիտասարդների անտարբեր կեցվածքը: Ռուսաստանում ավելի դյուրին է շփվել ու աշխատել ռուսների, թաթարների եւ այլոց հետ, քան հայերի, որովհետեւ, որքան էլ ցավալի է խոստովանելը, վերջիններս նրանց գիջում են իրենց կազմակերպվածությամբ ու վարվելակերպով: Նրա կարծիքով, հայ երիտասարդները գլոբալիզացիայի հարցերը քննարկելուց առաջ պետք է լուծեն այնպիսի կարեւոր հարցեր, ինչպես բարեկիրթ պահվածքն ու խոսքն են:

Արտեմ Մինասյանը տեղեկացրեց, որ իրենց կազմակերպության ջանքերով Տոլյատիից Ռուսաստանի հայերի միության պատվիրակության հետ Հայաստան են եկել նաեւ զինակոչային տարիքի 10 հայաստանցի երիտասարդներ: «Նրանք հրաւալի երիտասարդներ են եւ շատ են ցանկանում ծառայել հայկական բանակում: Առանց խաղաղացիության նրանք այնտեղ ոչ մի հեռանկար չունեն: Նրանցից շատերն իրենց որոշման մասին ծնողներին տեղեկացրել են մեզ դիմում գրելուց հետո:

Գուցե նրանց օրինակին հետեւեն նաեւ Ռուսաստանի տարբեր քաղաքներում իրենց կյանքն անմասակ անցկացնող մյուս երիտասարդները», ասաց նա:

Համաժողովի մասնակիցները որոշեցին ստեղծել աշխատանքային խումբ, քննարկված հարցերը ավելի մանրամասն ուսումնասիրելու նպատակով:

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Տնտեսական ֆորումն իսկապես եւ հայկական էր, եւ միջազգային

1-ին էջից

Հայկական միջազգային համաժողովը ողջունել էին նաեւ Ուկրաինայի նախագահ Լեոնիդ Կուչման եւ վարչապետ Վիկտոր Յանուկովիչը, Յունեսկոյի նախագահ Կաեսիրա Մացուրան: Ուկրաինայի ներկայացուցչի ելույթին հաջորդեց Սլովակիայի սանդարացման եւ սերտիֆիկացման կոմիտեի նախագահ Դուշան Պոդգորսկին, որը ներկայացրեց սլովակյան գործարարների առդեն կատարված եւ սպասվող ներդրումները: Մասնավորապես նա տեղեկացրեց, որ սլովակյան ընկերությունները պատրաստվում են ներդրումներ կատարել էներգետիկ ոլորտում, քիմիական արդյունաբերության մեջ: Իսկ Ուկրաինայի հրեական համայնքի ղեկավար Վադիմ Ռաբինովիչը նշեց, որ ինքը հանդես է գալիս որպես գործարար եւ Հայաստան է եկել գործարարների խմբի հետ: Նա հայտնեց, որ իր ղեկավարած հոլդինգի մեջ ընդգրկված է 27 երկրներում տարածվող թերթ, որի էջերում ինքը պատրաստ է մեկ տարի անվճար գովազդել հայկական բիզնեսը:

Սփյուռքի անունից տնտեսական համաժողովը ողջունեց ամերիկահայ ազգային գործիչ, ՌԱԿ կենտրոնական վարչության համաաստենապետ Երվանդ Ազատյանը:

Համաժողովում Հայաստանի տնտեսության զարգացման անցած ուղին, ներկա վիճակը եւ հեռանկարները ներկայացրեց առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարար Կարեն Ճշմարիտյանը: Նա անդրադարձավ վերջին տարիներին արձանագրված տնտեսական աճի բարձր տեմպերին, Հայաստանում կատարված ներդրումներին, արտաքին առեւտրի ծավալների մեծացմանը եւ տնտեսական մյուս ցուցանիշներին:

Հայաստանի ներդրումային վիճակի մասին առանձին զեկույցով հանդես եկավ զարգացման հայկական գործակալության գործադիր տնօրեն Վահագն Մովսիսյանը: Նա մեր երկրի ներդրումային առավելություններից նշեց բարձրորակ եւ էժան աշխատուժը, բնակչության կրթական բարձր մակարդակը, օտարերկրյա ներդրումների պաշտպանությունը օրենքով եւ այլն: Ներդրումների համար նախընտրելի ոլորտների թվում նշվեցին տեղեկատվական տեխնոլոգիաները, քիմիական եւ դեղագործական արդյունաբերությունը, թեթեւ արդյունաբերությունը, սննդարդյունաբերությունը, էլեկտրոնիկան, ոսկերչությունը, ակնագործությունը, տուրիզմը եւ այլն:

«Հայաստանի քաղաքական կյանքին չեմ մասնակցում»

Հայկական միջազգային տնտեսական ֆորումի ընդմիջմանը Արա Աբրահամյանը պատասխանեց լրագրողների հարցերին: Մամուլի ասուլիսին մասնակցում էր նաեւ Ռուսաստանում հայտնի քաղաքագետ Անդրանիկ Միհրանյանը:

ՀՀԿ նախագահը ներկայացրեց կոնգրեսի հիմնադրմանը հաջորդած ժամանակահատվածում կատարված աշխատանքները: Նա մասնավորապես նշեց, որ սա երկրորդ միջոցառումն էր ցեղասպանությանը նվիրված համաժողովից հետո: ՀՀԿ-ի նպատակն է օգնել ոչ միայն սփյուռքին, այլեւ Հայաստանին: Կոնկրետ ծրագրերից Արա Աբրահամյանը հիշատակեց մասնակցությունը Հյուսիսային պողոտայի շինարարությանը, Ծաղկաձորի համալիրի կառուցումը եւ Եղեգնաձորում պահածոների գործարանի ստեղծումը: Ծրագրերի իրականացման ընթացքում չնախատեսված խնդիրներից խուսափելու նպատակով նա կարետրեց Հայաստանի կառավարության հետ պայմանագրի ստորագրումը, որտեղ պետք է ընդգծվի, թե ինչ չափանիշներով պետք է գործի եւ ինչ պարտավորություններ վերցնի կոնգրեսը:

Ադրբեջանի եւ Վրաստանի կողմից ճանապարհների բացման մասին Ռուսաստանի տրանսպորտի նախարարի հայտարարության կապակցությամբ տրված հարցին Արա Աբրահամյանը պատասխանեց, որ պետք է փնտրել եւ գտնել մեր ճանապարհների բացման մեխանիզմը, իսկ Անդրանիկ Միհրանյանն ավելացրեց, որ իրենց առաջնահերթ խնդիրներից է Ռուսաստանի իշխանությունների մոտ լոբբիստական աշխատանքի կատարումը: «Ազգի» այն հարցին, թե ավելի նպատակահարմար չէ՞ աշխատանքներ տանել այլընտրանքային ճանապարհների ստեղծման ուղղությամբ, Արա Աբրահամյանը պատասխանեց, որ, բնականաբար, այդ աշխատանքները նույնպես, զուգահեռաբար տարվում են: Նա նաեւ տեղեկացրեց, որ ՀՀԿ-ն համագործակցում է ոչ միայն Ռուսաստանի իշխանությունների, այլեւ այդ երկրում բնակվող այլ ազգությունների ներկայացուցիչների հետ եւ նրանց ներկայացնում հայկական խնդիրները: Արա Աբրահամյանը հայտնեց, որ, օրինակ, իրեն հրավիրել են մասնակցելու Մոսկվայում կայանալիք ադրբեջանցիների միջազգային կոնգրեսին: Անդրանիկ Միհրանյանն ավելացրեց, որ կոնգրեսն աշխատում է նաեւ, որ հայերին ճանաչեն ոչ թե որպես «կովկասյան ազգության անձանց», այլ որպես հայերի: «Այսօր հայերին ավելի ու ավելի հիշ են անվանում «կովկասյան ազգության», ասաց Անդրանիկ Միհրանյանը:

Այն հարցին, թե Հայաստանի ներքաղաքական կյանքում Արա Աբրահամյանը տեղ զբաղեցնելու ակնկալիք ունի՞, ՀՀԿ նախագահը պատասխանեց, որ ինքն անձամբ Հայաստանի քաղաքական կյանքին չի մասնակցում, իսկ այն ամենը, ինչ արվում է, արվում է միայն Հայաստանի ժողովրդի եւ պետության համար: Հայաստանի կառավարության հետ հարաբերություններին վերաբերող հարցին էլ Արա Աբրահամյանը պատասխանեց, որ ինքը լավ հարաբերություններ ունի Հայաստանի կառավարության հետ, այլապես այստեղ չէր գա: «Խնդիրը դրանց առավել բարելավումն է», եզրափակեց ՀՀԿ նախագահը:

Ձախից աջ՝ Վլադիմիր Աղայան, Անդրանիկ Միհրանյան եւ Արա Աբրահամյան:

Տավորականները «Եհովայի վկաներ» աղանդի գրանցումը համարում են...

1-ին էջից

«Մինչեւ այսօր մենք տարբեր ճանապարհներով մի կերդ էինք գրականություն ձեռք բերում մեր հավատացյալների համար: Կարծում եմ, գրանցումը թույլ կտա հետագայում դա, որպեսզի յուրաքանչյուրն ունենա իր գիրքը», ասաց Քեչիչյանը:

Ֆելիքս Քոլեյը Նորվեգիայում գործող «Ֆորում-18» քրիստոնեական լրատվական ծառայության խմբագիրն է: Այս կազմակերպությունը լուսաբանում է կրոնական ազատությունների հարցեր: Էլեկտրոնային փոստով **«Ազգի»** հետ ունեցած հարցազրույցում նա ասաց, որ բոլոր կրոնների հավատացյալներն ունեն իրավունք ազատորեն դավանելու իրենց հավատը: «Եթե «Եհովայի վկաները» կամ որեւէ այլ համայնք ցանկանում է գործել Հայաստանում, ապա դրա իրավունքն ունի: Եթե ցանկանում է հրապարակել կրոնական գրականություն, տարածել հավատացյալների շրջանում եւ ունենալ հավատի վայրեր, ապա դրա իրավունքն ունի», ասաց Քոլեյը:

Կարծիքներ կան, որ «Եհովայի վկաների» գրանցումից հետո հնարավոր կլինի իրավական ճանապարհով սահմանել նրան գործելու Հայաստանի օրենքների շրջանակներում: Սոս Սարգսյանը չի կարծում, թե «վկաների» գործունեության օրինականացումը նաեւ դրական է: «Ճիշտ է, արգելելը դառնում է արգելված պտուղ, այդ աղանդին դարձնում գրավիչ, բայց սա սազում է մեծ երկրներին: Հայաստանը փոքր է, դարերի ընթացքում ապրել ենք մեր ինքնությամբ: Այս ալիքները պղտորում են մեր զուլալ ջրերը», ասաց նա:

Պերճ Զեյթունցյանը կարծում է, որ աղանդները տարածվում են շատ բարեկեցիկ երկրներում, որտեղ մարդիկ նոր բան են փնտրում, եւ աղքատ երկրներում, որտեղ մարդիկ փոփոխություններից են բռնում: «Հայաստանում բոլոր հիմքերը կան, որ մարդիկ աղանդավոր դառնան՝ աղքատություն, հուսալքություն, բայց մարդիկ պետք է գիտակցեն, որ խելքը գլխին մարդն աղանդներին չի դիմի, աղանդավորները խավարամիտ մարդիկ են, ազգի դավաճաններ: Մենք ուզում ենք դուրս գալ մեծ պետություններին: Սակայն ժամանակն է, որ սկսենք մենք մեզ էլ դուրս գալ: Օրինակ՝ Իրաք խումբ չոտարկելով, կամ Ավ. Իսահակյանի գրադարանը հանուն բիզնեսի չխլելով:

Աղանդների մի մասը դժգոհ է հայ եկեղեցականներից, բայց դա չի նշանակում, որ դժգոհ պետք է լինել Հայ եկեղեցուց, ինչպես Հայաստանի պետությունից դժգոհ լինելը չի նշանակում դժգոհ լինել Հայոց պետականությունից: Թող մեծ երկրներն իրենց բռայլություն թույլ տան եւ աղանդավորներին գրանցեն: Փոքր Հայաստանում միշ մարդ է մնացել, իսկ եհովականների 30 հազարը վտանգավոր թիվ է», ասաց Զեյթունցյանը:

Հրաչ Քեչիչյանն ասում է, որ թեեւ ինքը չունի վիճակագրություն, սակայն գիտի, որ իր կազմակերպությանն անդամակցում են գիտաշխատողներ, բարձրագույն կրթություն ստացածներ, հասարակության տարբեր շերտեր, բայց «չեմ հանդիպել գործող բարձրաստիճան պաշտոնյայի, որը «Եհովայի վկա» է: Հայաստանում «Եհովայի վկաներին» երբեմ չեն ճնշել, բռնություններ կիրառել, հալածանքներ չեն եղել, կարողացել ենք մեր ժողովները անցկացնել, ասաց նա: Վկաներն, ըստ մեր կանոնադրության, կարող են ունենալ հավատի տաճար՝ Թագավորության սրահ: Հայաստանում դեռեւս չկան Թագավորության սրահներ: Հող գնելը դժվար կլինի, տների առումով կարող է անհարմար լինել այցելուների համար»: Քեչիչյանը չի կարծում, որ գրանցումից հետո «վկաների» թիվը կավելանա, «գրանցումը դրա հետ բացարձակապես կապ չունի»:

ԱՊՀ երկրներում, ըստ Քոլեյի, եհովականները գրանցում չեն ստացել միայն Թուրքմենստանում: «Չնայած Վրաստանը չունի կրոնական համայնքներին գրանցելու համակարգ, «Եհովայի վկաներն» ստացել են օրինական կարգավիճակ եւ ունեն իրենց երկու կազմակերպությունները: Բելառուսում, Ռուսաստանում, Մոլդովայում, Ուկրաինայում, Ադրբեջանում, միջինասիական հանրապետություններում կան «Եհովայի վկաների» համայնքներ, որոնք գրանցված են», ասաց նա:

ԹԱՄԱՐԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Համաշխարհային հայկական կազմակերպությունը քայլ առ քայլ իրագործում է իր ծրագրային նպատակները

Արա Աբրահամյանի ելույթը երեւանյան տնտեսական համաժողովում

2003 թ. հոկտեմբերին ստեղծված Համաշխարհային հայկական կոնգրեսը կազմակերպական ձեւավորման բարդ գործընթաց է անցնում:

ՀՀԿ հիմնադիր համագումարում մեր ժողովրդի համար սահմանված կարեւորագույն խնդիրների լուծման նպատակով գրեթե բոլոր աշխարհամասերում կենսագործունեության տարբեր ոլորտներում հայկական համայնքները եւ առանձին անձինք վիթխարի հաջողությունների են հասել: Սակայն, չնայած նրանց ջանքերի միավորման հսկայական դժվարություններին, մեր կազմակերպությունը քայլ առ քայլ իրագործում է իր ծրագրային նպատակները: Ընթացիկ տարվա մայիսին ՀՀԿ-ն աշխարհի բազմաթիվ երկրների առաջատար գիտնականների մասնակցությամբ կոնֆերանս կազմակերպեց ՀՀԿ-ին առընթեր Ցեղասպանության փորձագիտական հանձնաժողովի ստեղծման նպատակով, որը կոչված է միասնական համահայկական դիրքորոշում մշակելու հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանն առնչվող հարցերի վերաբերյալ: Առաջին հերթին դա վերաբերում է թուրքական իշխանությունների կողմից Հայոց ցեղասպանության իրականացման ժամանակագրական շրջանակների, պատճառված վնասի փոխհատուցումների չափի եւ Թուրքիայի Հանրապետության նկատմամբ տարածքային պահանջների սահմանմանը:

Կոնֆերանսում հաստատվեց փորձագիտական հանձնաժողովի կազմը, որն արդեն սկսել է աշխատանքը: Այն համակարգում է Մոսկվայի Միջազգային իրավունքի եւ քաղաքագիտության հայկական ինստիտուտը՝ պրոֆեսոր Ց. Գ. Բարսեղովի գլխավորությամբ:

Սակայն, ինչպես մենք ընդգծեցինք հիմնադիր համագումարում, անհնար է լուրջ հաջողություններ հասնել Ցեղասպանության ճանաչման եւ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հարցում, հասնել Ղարաբաղի խնդրի արդարացի լուծման, եթե հայ ժողովրդին չհաջողվի ջանքերը միավորելով պայմաններ ապահովել հայոց պետության արդյունավետ սոցիալ-տնտեսական զարգացման համար:

Դա մի կողմից պահանջում է սփյուռքի եւ Հայաստանի գործարար շրջանակների ջանքերը միավորել Հայաստանի տնտեսության մեջ սփյուռքահայ ձեռնարկատերերի ներգրավման ասպիրանտը բարձրացնելու համար: Մյուս կողմից՝ հրամայաբար անհրաժեշտ է Հայաստանի տնտեսությունը եւ ձեռնարկատերերին ներգրավել միջազգային բիզնես-կառույցներում: Հայաստանի տնտեսությունը եւ բիզնեսը պետք է իրենց տեղը գտնեն միջազգային տնտեսական ընկերակցությունում:

Առաջին հայացքից տարբեր այդ երկու նպատակներին հասնելու համար Կոնգրեսը մի շարք քայլեր է ձեռնարկել ինչպես սփյուռք-սփյուռք, սփյուռք-Հայաստան գծով հայ գործարարների հորիզոնական կապերի հաստատման, այնպես էլ աշխարհի տարբեր երկրների առաջատար ընկերությունների միջեւ անմիջական գործարար կապերի հաստատման նպատակով միջազգային ընկերակցության ստեղծման ուղղությամբ: Ռուսաստանի իշխանությունների աջակցությամբ եւ առեւտրաարդյունաբերական պալատի, ինչպես նաեւ Ռուսաստանի արդյունաբերողների ու ձեռնարկատերերի միության (ՌԱՁՄ) մասնակցությամբ մենք ստեղծեցինք Արտաքին տնտեսական կապերի միասնական ընկերակցություն (ԱՏԿՀԸ): Այն դարձավ միջուկ, որի շուրջն արդեն առաջացել են Ռուսաստան-Արգենտինա, Ռուսաստան-Հարավային Կորեա ձեռնարկատերերի ընկերակցություններ: Կազմավորման փուլում են Ռուսաստան-Ֆրանսիա, Ռուսաստան-Բրազիլիա, Ռուսաստան-Իտալիա ընկերակցությունները: Ենթադրվում է համանման ընկերակցություններ ստեղծել ԱՊՀ շրջանակներում. Ռուսաստան-Վրաստան, Ռուսաստան-Ղազախստան եւ այլն:

Այսպիսով, ՀՀԿ-ի նպատակն է ոչ միայն նպաստել սփյուռք-սփյուռք գծով հայ գործարարների ջանքերի կառուցվածքային ձեւավորմանն ու ամրապնդմանը, այլեւ փորձել հայկական բիզնեսը բարձրացնել արտաքին տնտեսական կապերի որակապես նոր մակարդակի, որն առավել շատ կհամապատասխաներ գլոբալացման ներկա փուլին: Ուստի ենթադրվում է ֆորումի շրջանակներում քննարկել Ռուսաստան-Հայաստան ձեռնարկատերերի ընկերակցության ստեղծմանն առնչվող կազմակերպական հարցեր: Ընկերակցությունը համապարփակ այն կառույցի օղակներից մեկն է, որն ընդգրկում է Արտաքին տնտեսական կապերի միջազգային ընկերակցությունում արդեն ներգրավված միջազգային գործարար ընկերակցության գլխավոր մասնակիցներին:

Այդ ընկերակցությունը ոչ թե փոխարինում, այլ օրգանապես լրացնում է իրոք գոյություն ունեցող մեխանիզմներին եւ հաջողությամբ գործող կառույցներին, որոնք պատասխանատու են տարբեր երկրների բիզնես-մենների գործարար կապերի հաստատման համար: Ըստ էության, տվյալ մեխանիզմը թույլ է տալիս անմիջական շփումներ հաստատել երկրներից յուրաքանչյուրը ներկայացնող առավել նշանակալի 50 ընկերությունների միջեւ:

Հենց այդ պատճառով ներկայիս ֆորումի աշխատանքին մասնակցում են ինչպես Հայաստանի եւ սփյուռքի գործարարներ եւ հասարակական գործիչներ, այնպես էլ վերոհիշյալ համապարփակ բիզնես-կառույցի ստեղծմանը մասնակցող մի շարք պետությունների ձեռնարկատերերի առաջատար միավորումների ղեկավարներ եւ կառավարությունների անդամներ:

Միեւնույն ժամանակ ուզում եմ նշել, որ տվյալ ֆորումն անցկացնելիս Համաշխարհային հայկական կոնգրեսի գլխավոր նպատակը կոնկրետ բիզնես-նախագծերի մշակումն ու իրագործումն է, որոնք կնպաստեն Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացմանը, հայկական սփյուռքի քաղաքական ու տնտեսական ներուժի, միջազգային ֆինանսատնտեսական կառույցների առավել արդյունավետ օգտագործմանը, այլ կերպ ասած՝ Հայաստանի զարգացման երկարաժամկետ ռազմավարական խնդիրների լուծմանը:

Ֆորումի աշխատակարգը նախատեսում է.

- Հայաստանի կառավարությունից, տեղական եւ միջազգային կազմակերպություններից տեղեկատվություն ստանալ Հայաստանի տնտեսության ներկա վիճակի եւ զարգացման հեռանկարների, ներդրումային մթնոլորտի եւ օտարերկրյա ուղղակի ներդրումների համար առավել գրավիչ տնտեսական գլխավոր հատվածների վերաբերյալ:

- Քննարկել եւ ձեւավորել միջազգային տնտեսական հարաբերությունների համակարգին Հայաստանի մասնակցության եւ արտաքին տնտեսական կապերի համապարփակ համակարգում Հայաստանի կառուցվածքային ներգրավման նոր հայեցակարգը:

- Պարզաբանել Համաշխարհային հայկական կոնգրեսի նոր կառույցների՝ Ռազմավարական հետազոտությունների կենտրոնի եւ Փոքր ու միջին բիզնեսի աջակցման ներդրումային հիմնադրամի հայեցակարգերը, հիմնական խնդիրները եւ միջնաժամկետ ծրագրերը:

- Երկարաժամկետ գործընկերներ գտնել առաջադրված խնդիրների ձեւակերպման ու կատարման եւ մի շարք նախագծերի համատեղ իրականացման համար:

Կուզեի առավել հանգամանորեն անդրադառնալ վերոհիշյալ երկու խնդիրների:

1. Հայաստանի մասնակցությունը արտաքին տնտեսական կապերի համակարգին: Հայաստանի զարգացման կարեւոր խնդիրներից մեկը տրանսպորտային հաղորդակցությունների խնդիրն է եւ տարածաշրջանի աշխարհաքաղաքական բարդ իրավիճակը: Այդ բնական սահմանափակումներն անհրաժեշտ է փոխհատուցել արտաքին տնտեսական կապերի համակարգին Հայաստանի առավել ակտիվ մասնակցությամբ: Հայաստանի համար տրանսպորտային միջանցքների բացման հարցում չափազանց կարեւոր դեր կարող է խաղալ Արտաքին տնտեսական կապերի համառուսաստանյան ընկերակցությունը (ԱՏԿՀԸ), որը նույնպես տվյալ համաժողովի կազմակերպիչ է եւ, ինչպես վերը նշվեց, ստեղծվել է Ռուսաստանի տնտեսական զարգացման եւ առեւտրի նախարարության, արտաքին գործերի նախարարության եւ առեւտրաարդյունաբերական պալատի, պետական ու հասարակական այլ կազմակերպությունների աջակցությամբ: ԱՏԿՀԸ-ն կոչված է համակարգելու եւ ակտիվացնելու անմիջական շփումները տարբեր երկրների գործարարների արտաքին տնտեսական հարաբերությունների համակարգում:

Մենք ենթադրում ենք այդ ընկերակցությունում ներգրավել նաեւ Վրաստանին: Վերջերս Թբիլիսիում կայացած տնտեսական ֆորումում իմ զեկուցման մեջ բարձրացվեց Վրաստանով անցնող Երեւան-Մոսկվա երկաթգիծը բացելու հարցը, որը փակ է վրացաբխազական հակամարտության պատճառով: Համոզված եմ, որ այդ հարցը կարելի է լուծել, եթե անհրաժեշտ ջանքեր գործադրեն այդ երկաթգծի փակումից վնասներ կրող շահագրգիռ պետությունները, եւ միջազգային ընկերակցությունն ակտիվորեն մասնակցի դրան: Վրաստանով Ռուսաստան տանող երկաթգծի բացման հարցը պետք է դրվի 3 շահագրգիռ երկրների օրակարգում:

2. ՀՀԿ Ռազմավարական հետազոտությունների կենտրոնի եւ Փոքր ու միջին բիզնեսի աջակցման ներդրումային հիմնադրամի աշխատանքը: Ռազմավարական հետազոտությունների կենտրոնի գլխավոր խնդիրը կդառնա քաղաքական, տնտեսական, սոցիալական եւ մշակութային ոլորտներում Հայաստանի եւ սփյուռքի զարգացման կարեւոր խնդիրների սահմանումը, տվյալ հարցերի վերաբերյալ արդեն առկա հետազոտությունների մասնագիտացումը եւ այդ հարցերի լուծմանն ուղղված ծրագրերի ու նախագծերի մշակումը:

Ինչպես այդ կենտրոնի մշակելիք ծրագրերի, այնպես էլ առանձին բիզնես-նախագծերի իրականացմանը կնպաստի երկրորդ կարեւորագույն կառույցը՝ Փոքր ու միջին բիզնեսի աջակցման ներդրումային հիմնադրամը: Ֆորումին կներկայացվեն մի շարք բիզնես-նախագծեր, որոնց իրագործումը նախատեսվում է արդեն 2005 թ.: Այս ձեռնարկման ընթացքում Համաշխարհային հայկական կոնգրեսը հույս ունի գործընկերներ գտնել հայ եւ արտասահմանցի գործարարների մեջ:

Տվյալ ֆորումն անցկացնելով մենք առաջին քայլն ենք կատարում հայ գործարարների եւ միջազգային ֆինանսատնտեսական կառույցների ջանքերի միավորման ճանապարհին՝ ի շահ ինչպես մարդ ու միջակ, այնպես էլ ծավալուն տնտեսական նախագծերի իրականացման, որոնք կնպաստեն մեր մայր հայրենիքի՝ Հայաստանի տնտեսական զորության ամրապնդմանը: Համոզված եմ, որ առաջին քայլին կհաջորդեն նաեւ մյուսները:

ՀՀԿ նախագահ Արա Աբրահամյան:

Ա. Աբրահամյանը ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանի հետ:

Քաղաքական զարգացումներն Իրաքում ստիպում են ԱՄՆ-ին շարունակել պատերազմը

Դա նախագահի պաշտոնում Քերիի համեմատ նախընտրելի է դարձնում Բուշին

Նոյեմբերի 2-ին ԱՄՆ-ում նախագահական ընտրություններ են: Որքան մոտենում է ընտրությունների օրը, այնքան սրվում է գործող նախագահի, հանրապետական Ջորջ Բուշի եւ դեմոկրատ Ջոն Քերիի մրցակցությունը, թեժ բնույթ է ստանում նրանց բանավեճը: Թեկնածուները հիմնականում վիճարկում են հակաիրաքյան պատերազմի նպատակահարմարությունն ու ամերիկյան տնտեսության վատթարացումը՝ փորձելով կողմնորոշել ընտրողներին:

Ակնհայտ են հակաիրաքյան պատերազմի եթե ոչ կործանարար, ապա խիստ բացասական հետեւանքներն ամերիկյան տնտեսության համար: Դրանում կարելի է համոզվել՝ նշելով ԱՄՆ-ի պետբյուջեի ճեղքվածքը, որն ընթացիկ տարում ավելի քան 190 միլիարդ դոլար է կազմում: Այս ցուցանիշը երկրի պատմության մեջ աննախադեպ է, ընդ որում դրան զուգընթաց խիստ կրճատվել են ամերիկյան տնտեսության մեջ դրսից կատարվող ներդրումները: Այսինքն՝ ԱՄՆ-ը զրկվել է պետբյուջեի ահռելի չափերի հասնող ճեղքվածքը կարիտասի ներհոսքի միջոցով գոնե կրճատելու հնարավորությունից:

Սակայն դա չի խանգարում, որ տնտեսության հարցում Քերիին պաշտպանող ամերիկացիներն Իրաքի հարցում պաշտպանեն Բուշին, որքան էլ ԱՄՆ-ը խճճվի այնտեղ, պատերազմն անբարենպաստ ընթացք ունենա նրա համար, բոլորովին չտեսա դրա վերջը եւ գործող նախագահը հաղթանակի մշտական խոստումներով անընդհատ կրկնի ռազմական գործողությունները շարունակելու իր վճռականությունը:

Ինչպես երեւում է, Իրաքի դեմ պատերազմը շարունակելու առումով էականը Բուշի վճռականությունը չէ, այլ նրա վրա «նոր պահպանողականների» անվիճելի ազդեցությունը: Վերջիններս, լինելով ԱՄՆ-ի հրեական լոբբիի ազդեցիկ ներկայացուցիչներ, անվիճելիորեն Իսրայելի վարչապետ Արիել Շարոնի վարչակարգի ազդեցության տակ են: Իսկ հրեական լոբբին համաշխարհային կառույցներում ԱՄՆ-ում չափազանց մեծ ազդեցություն ունի:

Եթե պաշտոնական Վաշինգտոնի վրա «նոր պահպանողականների» ազդեցությունը համարենք ԱՄՆ-ում հրեական կառույցների ազդեցության հետ, ապա չենք դժվարանա կռահել, որ Իրաքում Բուշի վարչակազմի խնդիրը ոչ այնքան պատերազմն է, որքան դրա ծառայեցումը Իսրայելի տարածաշրջանային շահերից բխող ամերիկյան ծրագրերին:

Այլ կերպ՝ «նոր պահպանողականները» չեն կարող որեւէ կերպ հաշտվել Իրաքում ռազմական գործողությունների դադարեցման հետ: Հետեւաբար նրանք, ինչպես նաեւ ԱՄՆ-ի հրեական լոբբին, չպետք է հանդուրժեն նախագահի պաշտոնից Ջորջ Բուշի հեռացումը: Այս հանգամանքը զգալի նվազեցնում է նախագահական ընտրություններում Ջոն Քերիի հաղթանակի հավանականությունը: Կա նաեւ մեկ այլ հանգամանք՝ Իրաքում ԱՄՆ-ի խճճվելը:

Քանի որ պատերազմի պայմաններում անհնար է ամերիկյան տնտեսության բարելավումը, իսկ վերջ տալու դեպքում ԱՄՆ-ն ակամա կանգնում է Իրաքից հեռանալու փաստի առջեւ, որքան էլ նրա խճճվածությամբ բացառվի այդ հնարավորությունը, ուստի Քերիին մնում է ընտրություններին մասնակցել առանց Բուշին հաղթելու ակնկալիքի կամ էլ դառնալ ամերիկյան հրեական կառույցների հակազդեցության թիրախ եւ հաղթանակի հավանականությունը պայմանավորել այդ հակազդեցության հաղթահարմամբ:

Կհաջողվի՞ Ջոն Քերիին առաջիկա նախագահական ընտրություններում հաղթելու համար հաղթահարել հրեական կառույցների հակազդեցությունը «նոր պահպանողականների» համառ դիմադրությամբ հանդերձ, դժվար է ասել: Բայց ԱՄՆ-ի դուրս գալն Իրաքից, երբ այնտեղ հետզհետե ծավալվում է իրաքցիների համաժողովրդական բնույթ ստացած դիմադրությունը, իրատեսական չի թվում:

Ակնհայտ է, որ ամերիկյան զորքերը Իրաքից դուրս գալու դեպքում այլեւս ի վիճակի չեն լինի վախ ներշնչել: Դա, անկախ պատճառաբանությունների բնույթից, կընկալվի որպես տկարության նշան, այսպիսով կխթանվեն հակաամերիկյան տրամադրությունները ինչպես տարածաշրջանում, այնպես էլ իսլամական աշխարհում: Այս պայմաններում ԱՄՆ-ի թշնամիների համար կստեղծվեն պատճառներ հարձակման անցնելու նախադրյալներ: Ամերիկացիները կստարեալապես կհեղինակազրկվեն, միաժամանակ հարվածի տակ կդրվի «ամերիկամետ» վարչակարգերի գործունեությունը դաշնակից երկրներում:

Այս ամենը նշանակում է, որ պատերազմն Իրաքում դեռեւս անխուսափելի է: Դրա անխուսափելիությունը թեեւ չի ենթադրում Բուշի վերընտրություն, բայց եւ այնպես նախագահի պաշտոնում նրան Քերիի համեմատ նախընտրելի է դարձնում: Ի վերջո, հակաիրաքյան պատերազմը նա է սկսել: Նորմալ պահարար է, որ ինքը շարունակի եւ հասցնի տրամաբանական ավարտին՝ հետեւանքների վերացումը թողնելով հաջորդ նախագահին:

ՀԱՐՈՒԹ ՉԱՔԱՐՅԱՆ

Բուշեհրի ԱԷԿ-ի շինարարությունն ավարտված է

Իրանի Բուշեհր քաղաքում ռուսաստանցի մասնագետներն ավարտել են ատոմակայանի շինարարությունը: Այդ մասին հաղորդում է ՌԻԱ գործակալությունը՝ վկայակոչելով Իրանի փոխնախագահ Ղոլամ Ռզա Աղազադեի հայտարարությունը:

Հոկտեմբերի 12-ին Իրան է հասել ԱԷԿ-ի առաջին բլոկի սարքավորումների հերթական խմբաքանակը: Փոխնախագահի խոսքերով, սարքավորումների 80 տոկոսն արդեն Իրանում է, մինչեւ գարուն կբերվի մնացյալ մասը: «Ռուսաստանի եւ Իրանի վրա Վաշինգտոնի եւ Արեւմուտքի որոշ երկրների ճնշումները որեւէ ազդեցություն չեն գործի տվյալ նախագծի իրականացման վրա», ավելացրել է Աղազադեն:

Նախատեսված է Բուշեհրի ԱԷԿ-ը գործարկել 2005 թ. երկրորդ կեսին, իսկ շահագործումն սկսել 2006 թ.: Մոտ ժամանակներս ստորագրվելու է ռուս-իրանական պայմանագիր միջուկային վառելիքի մատակարարումների վերաբերյալ: Հավելյալ փաստաթղթով կնախատեսվի Ռուսաստան վերադարձնել բանեցված վառելիքը, նշում է ՌԻԱ գործակալությունը:

ՄԱԿ-ում Իրաքը վերստացել է ձայնի իրավունքը

Իրաքը ՄԱԿ-ում վերջին ձայնի իրավունք է ստացել, չնայած կազմակերպության Ընդհանուր ժողովը խոստովանել է, որ այդ երկիրն անկարող է վճարել ՄԱԿ-ի պարտքերը: «Նյու Յորք թայմսի» տվյալներով, ՄԱԿ-ին Իրաքի պարտքը կազմում է 14,6 միլիարդ դոլար:

Ջեւակնորեն Իրաքն անկախությունը վերստացել է 2004 թ. հունիսից, բայց ՄԱԿ-ում նրա ներկայացուցիչները մինչեւ երեքշաբթի դեռ քվեարկության իրավունք չունեին:

Այդտեղերծ Ընդհանուր ժողովը որոշեց զանց առնել իր կանոնադրությունը եւ վերականգնել Բաղդադի ձայնի իրավունքը: Այդ իրավունքը վերստացան նաեւ Կենտրոնական Աֆրիկայի Հանրապետության, Կոմորյան կղզիների, Վրաստանի, Գվինեայի, Լիբերիայի, Նիգերի, Սան Տոմեի եւ Պրինսիպիի, Սոմալիի, Տաջիկստանի եւ Մոլդովայի ներկայացուցիչները:

Սադդամ Հուսեյնը վիրահատվել է

Իրաքի նախկին նախագահ Սադդամ Հուսեյնը վիրահատվել է Բաղդադի «Իբն Սինա» կլինիկայում: BBC-ն հաղորդում է, որ Հուսեյնը տառապում էր աղեթափությունից, բայց անցյալում հրաժարվել էր վիրահատվել:

Հուսեյնի կառավարման տարիներին «Իբն Սինա» կլինիկայում բուժվում էին միայն կուսակցական եւ պետական ընտրախավի ներկայացուցիչները: Իրաքի ժամանակավոր կառավարության մարդու իրավունքների նախարար Բախտիար Ամինը հաստատել է Հուսեյնի վիրահատման լուրը, ավելացնելով, որ նրա առողջական վիճակը «մտահոգության առիթ չի տալիս»: Ֆրանսիայի Ազգային ասամբլեային տված հարցազրույցում նախարարն ասել է, որ վիրահատությունը հաջող է անցել:

ԱՄՆ-ում փնտրում են 25 չեչեն ահաբեկիչների

ԱՄՆ-ում փնտրում են 25 չեչենների, որոնք ըստ երեւույթին երկիր են թափանցել Մեխիկայից: Իսլամիստ ծայրահեղականների հետ կապված չեչեն ահաբեկիչների այդ խմբի անդամների մասին հայտնի է միայն, որ նրանք ԱՄՆ են մուտք գործել Արիզոնայի նահանգի լեռներով, որոնց վերահսկողությունը չափազանց դժվար է տեղանաբերների համար: «Վաշինգտոն թայմս» թերթի տվյալներով, չեչեններն ունեն մեծ ռապորտարկեր:

Վերջերս ամերիկյան 6 նահանգների 8 քաղաքներում իշխանություններն ուժեղացրել էին դպրոցների պաշտպանությունը, վկայակոչելով ահաբեկչությունների հնարավոր վտանգը: «Վաշինգտոն թայմսը» թեեւ չի պնդում, թե նախազգուշական այդ միջոցները ձեռնարկվել են ԱՄՆ-ում Բեսլանի դեպքերի կրկնություն թույլ չտալու նպատակով, բայց չի էլ բացառում դա: Քանզի ԱՄՆ իշխանությունները համոզված են, որ Բեսլանի ահաբեկիչները կապված են «Ալ Ղաիդայի» հետ:

Նախազգուշական միջոցառումների պատճառն այն է, որ դեռ ամռանն Իրաքում գերի ընկած ռուս զինվորներից մեկի համակարգչում հայտնաբերվել էին ամերիկյան 6 նահանգների 8 քաղաքների տարական եւ միջնակարգ դպրոցների մանրամասն հասցեները եւ դրանց պաշտպանության համակարգերի տվյալները:

Իշխանություններն առհասարակ ամերիկյան բոլոր դպրոցներին կարգադրել են ուժեղացնել զգոնությունը եւ հետեւել դպրոցների շուրջը կատարվող կասկածելի անցուդարձին, հասցեների եւ այլ տվյալների հայթայթման փորձերին:

«Կովկասում ՆԱՏՕ-ի ակտիվությունը չպետք է անհանգստացնի Մոսկվային»

1-ին էջից

Հայաստանը եւ Ռուսաստանը համարվում են ռազմավարական դաշնակիցներ, ավելին՝ Գյումրիում է տեղակայված ռուսական 102-րդ ռազմակայանը, իսկ հայ-թուրքական եւ հայ-իրանական սահմանները համատեղ վերահսկում են հայ եւ ռուս սահմանապահները: Մյուս կողմից՝ Հայաստանը հայտարարում է ՆԱՏՕ-ի հետ հարաբերությունները խորացնելու ցանկությունների մասին:

Հայաստանի արտգործնախարար Վարդան Օսկանյանը սեպտեմբերի 22-ին մամուլի ասուլիսում հայտարարեց. «ՆԱՏՕ-ին անդամակցությունը չկա մեր արտաքին քաղաքականության մեջ: Կան ՆԱՏՕ-ի հետ առավելագույնս հարաբերությունների խորացումը, զարգացումը, համագործակցությունը, բայց ոչ անդամակցությունը»: Մեր մյուս հարեւաններից Վրաստանը հեռատեսությամբ հայտարարություններ է անում ՆԱՏՕ-ին եւ ընդհանրապես եվրոպական կառույցներին անդամակցելու իր ցանկությունների մասին: Ադրբեջանը, որ մինչեւ Իլհամ Ալիեւի իշխանության գալը եւ իր տեղը տեսնում էր ՆԱՏՕ-ում, այսօր ակնհայտորեն ռուսերանսներ է անում Մոսկվային:

«Դեռեւս վաղաժամ է խոսել ՆԱՏՕ-ին Հարավային Կովկասի որեւէ երկրի անդամակցության հնարավորության մասին: ՆԱՏՕ-ի նպատակն այս տարածաշրջանում անվտանգության ոլորտում համագործակցության ամրապնդումն է, եւ մենք պատրաստ ենք սերտորեն համագործակցել Կովկասի երկրների հետ խաղաղության եւ կայունության հասնելու համար», ասել է Բարնսը՝ հավելելով. «Համագործակցությունը դաշինքի հետ, որը եվրոպական խաղաղության եւ կայունության հիմնական երաշխավորն է, առավելությունների լայն շրջանակ է նախատեսում Հայաստանի համար»:

Վարդան Օսկանյանը վերջերս հայտարարել էր. «Եթե ստացվի այնպես, որ Վրաստանը եւ Ադրբեջանն ի վերջո դառնան ՆԱՏՕ-ի անդամներ, իսկ Հայաստանը՝ ոչ, ապա ակնհայտ է, որ դա նոր բաժանարար գծեր կառաջացնի Կովկասում»: Ի պատասխան Օսկանյանի վերոնշյալ հայտարարության Բարնսն ասել է, որ Սամբոլում կայացած գագաթաժողովում ՆԱՏՕ-ն հաստատեց «բաց դռների» իր քաղաքականությունը եւ հայտարարեց, որ 7 նոր երկրների անդամակցությունը դաշինքի վերջին ընդլայնումը չէր:

ՆԱՏՕ-Հավատակցության պայմանագիր կազմակերպություն (ՀԱՊԿ) համագործակցության հեռանկարների մասին ամերիկացի դիվանագետն ասել է. «Սեպտեմբերին ՀԱՊԿ ներկայացուցիչը Եվրասիական գործընկերության խորհրդում (ԵԱԳԽ) պատմեց կազմակերպության գործունեության տարբեր ուղղությունների մասին: Սակայն, քանի որ ՀԱՊԿ բոլոր անդամները նաեւ ԵԱԳԽ անդամ են, դժվարանում եմ ասել, թե ինչպիսի արժեք կարող է ունենալ այդ կազմակերպության հետ նոր կապող օղակների ստեղծումը:

ՀԱՊԿ-ն միավորում է նախկին խորհրդային 6 հանրապետությունների՝ Ռուսաստան, Բելառուս, Հայաստան, Ղազախստան, Տաջիկստան, Կիրգիզիա: Հունիսի 18-19-ը Աստանայում տեղի ունեցած ՀԱՊԿ գագաթաժողովում Ղազախստանի նախագահ Նազարբաեւն ասաց, որ կազմակերպությունը կառուցողական համագործակցություն է ծավալելու միջազգային անվտանգության այլ կազմակերպությունների, այդ թվում ՆԱՏՕ-ի հետ: Աստանայում տեղի ունեցած մամուլի ասուլիսում Հայաստանի նախագահը նշել էր. «Այսօր մենք ընդունեցինք փաստաթուղթ ՀԱՊԿ-ՆԱՏՕ համագործակցության հիմնական ուղղությունների մասին: Կազմակերպությունը հանգիստ է արձագանքում եւ դրական գնահատում ՀԱՊԿ-ՆԱՏՕ, ինչպես նաեւ ՀԱՊԿ-ի անդամ պետությունների եւ ՆԱՏՕ-ի համագործակցությունը: Փաստաթղթում նշված են համագործակցության ուղղությունները. տարածաշրջանային եւ միջազգային անվտանգություն, պայքար ահաբեկչության դեմ եւ մի շարք այլ ուղղություններ»:

Նիկոլաս Բարնսը «Մեդիամախին» ասել է. «Մեզ տպավորել էր այն, թե ինչպես Երեւանն անցկացրեց «Համաշխարհային լավագույն ջանք-2003» զորավարժությունները նաեւ այն պատճառով, որ դրանց մասնակցեցին թուրք սպաներ, ինչպես նաեւ մասնակցության հրավեր ուղարկվեց Ադրբեջանին՝ չնայած լարված հարաբերություններին»:

«Մենք պատրաստում ենք «Համաշխարհային լավագույն ջանք-2004» զորավարժությունների կազմակերպման ՆԱՏՕ-ի որոշումը եւ խոր ափսոսանք ենք հայտնում հայ մասնակիցներին մուտքի արտոնագիր չտրամադրելու Բաքվի որոշման կապակցությամբ: Մեր կարծիքով, այդ որոշումը հակասում է ՆԱՏՕ-ի հետ համագործակցության եւ դաշինքի հետ ավելի սերտ գործընկերության հաստատման Ադրբեջանի հաճախակի հայտարարություններին», ասել է Բարնսը: Ադրիլին Եվրոպայում ԱՄՆ զինված ուժերի փոխհրամանատար Չարլզ Վալդը Երեւանում հայտարարել էր, որ ՆԱՏՕ-ում ԱՄՆ դեսպան Բարնսն անձամբ զբաղվում է Ադրբեջանի տարածքում ՆԱՏՕ-ի զորավարժություններին հայ զինծառայողների մասնակցության հարցով:

Անդրադառնալով հայ-թուրքական հարաբերություններին, Բարնսն ասել է. «Թուրքիայի հետ Հայաստանի հարաբերությունների պատմությունը չի կարող ընկվել մեկ օրում եւ նույնիսկ մեկ տասնամյակում: Սակայն մի մոռացեք, որ այնպիսի ավանդական թշնամիներ, ինչպիսիք են Գերմանիան եւ Ֆրանսիան կամ Հունաստանը եւ Թուրքիան, այժմ կողք-կողքի աշխատում են ՆԱՏՕ-ի կազմում: ՆԱՏՕ-ն ավելին է, քան մեկ առանձին երկիր»:

Ինչպես հայտնի է, Հայաստանի նախագահը չմասնակցեց հունիսի 28-29-ը Սամբոլում կայացած ՆԱՏՕ-ի գագաթաժողովին: Պաշտոնական Երեւանն այդ որոշումը բացատրեց Հայաստանի եւ Թուրքիայի հարաբերություններում չգրանցվող առաջընթացով:

Նոյեմբերի սկզբին սպասվում է ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի այցը Երեւան:

ԹԱԼԱՐՈՍ ՀՐԱՆՈՒՇԻ

Մշակույթ

Ֆրանսիական գրականության նոր ժողովածու

Ֆրանսիական մեծ գրականության ճանաչման ու տարածման, այն հայ ընթերցողի սեփականությունը դարձնելու գործում նշանակալի ավանդ ունի բանասիրական գիտությունների դոկտոր Հենրիկ Բախչինյանը: Բանասիրական-գրականագիտական գործունեությանը Բախչինյանը զուգակցում է նաեւ թարգմանական աշխատանքը: Արդեն ընթերցողի սեղանին է բազմամյա թարգմանչական-հետազոտական աշխատանքի ծնունդ «Դրվագներ ֆրանսիական գրականության պատմության» գիրքը, որը բովանդակում է ֆրանսիական գրականության տարբեր շրջանների ներկայացուցիչների ու երեւույթների վերաբերյալ մի շարք ինքնատիպ ակնարկներ: Մասնանշված են հայ-ֆրանսիական որոշ գրական առնչություններ:

Հենրիկ Բախչինյանը երեք տասնամյակից ավելի զբաղվում է ֆրանսիական գրականության, մասնավորապես բանաստեղծության թարգմանությամբ: Գրքից տեղեկանում ենք, որ հայ իրականության մեջ Շառլ Բոդլերի ստեղծագործության նկատմամբ հետաքրքրությունը ծագել է դեռեւս անցյալ դարի վերջերին: Տեւական հետաքրքրություն է ունեցել Վահան Թեքեյանը: Բոդլերի ստեղծագործությունները հետաքրքրել են նաեւ Վահան Տերյանին: Նրա թարգմանությամբ լույս է տեսել 25 արձակ պոեմ:

1975 թվականին Վահան Տերյանի թարգմանությունների հետ Բախչինյանը լույս է ընծայել ֆրանսիական մեծ երթողի՝ Շառլ Բոդլերի «Փոքրիկ արձակ պոեմներ» գրքույկը: Թարգմանության ուղին այլեւս ընտրված էր Բախչինյանի համար՝ զուգակցել հայ միջնադարյան գրականության ուսումնասիրությունն ու ֆրանսիական գրականության թարգմանությունը: Ստեղծագործողհետազոտող գրականագետը շարունակել է «հայացնել» Բոդլերին՝ թարգմանելով նմուշներ «Չարի ծաղիկներ» ժողովածուից:

Բախչինյանը ջանք ու եռանդ չի խնայել թարգմանական երկի գեղարվեստական բարձր մակարդակն ապահովելու համար: Գիրքն արժեքավոր է նաեւ նրանով, որ Բախչինյանը հանգամանորեն ուսումնասիրել է նախորդ շրջանի թարգմանական փորձը, բանասերի ջանասիրությամբ պեղել է հայ նշանավոր գրական գործիչների (Դ. Վարուժան, Ա. Չոպանյան, Վ. Տերյան եւ այլն) բոդլերյան թարգմանությունները եւ զետեղել ծանոթագրությունների համապատասխան բաժիններում: Հաջորդ նշանակալից թարգմանչական աշխատանքը Նիկոլա Բուալոյի «Քերթողական արվեստ» տրակտատն է, որն առանձին գրքով լույս է տեսել 1980 թվականին, ակադեմիկոս Էդվարդ Ջրբաշյանի առաջաբանով եւ Բախչինյանի ընդարձակ ծանոթագրություններով:

Թատերագետ, ֆրանսիական գրականության գիտակ Լուիզա Սամվելյանը գրախոսելով Ն. Բուալոյի «Քերթողական արվեստ» տրակտատը՝ գրել է. «Բախչինյանի թարգմանության գլխավոր արժանիքը նրա համեստ պարզությունն է: Այն առավելությունը, որ հատուկ է Բուալոյի «Բանաստեղծական արվեստին», որին դավանում էր ինքը՝ հեղինակը, հայերեն թարգմանվել են առաջին անգամ:



հայ թարգմանչի համար դարձել է ուղեցույց: Չափածո տողերը հնչում են անբռնազբոս, հաճախ երաժշտական եւ դիպուկ՝ իրենց աֆորիստիկ կոմպակտությամբ»:

Թարգմանչի համար բավական նպաստավոր է եղել Երեւանի համալսարանի հրատարակչության նախաձեռնած «Ուսանողի գրադարան» մատենաշարը: Այդ շարքով 1982 թվականին հրատարակվել է Բախչինյանի կազմած եւ թարգմանած «Ֆրանսիական կլասիցիզմ» ժողովածուն, որտեղ ընդգրկված է նաեւ Կոռնեյլի «Սիդ» ողբերգությունը, Մոլիերի «Միզանտրոպ» կատակերգությունը եւ Բուալոյի «Քերթողական արվեստ» տրակտատը՝ որոշ վերապահումներով: «Ուսանողի գրադարան» մատենաշարով լույս է տեսել Բախչինյանի կազմած հաջորդ ժողովածուն՝ «Ֆրանսիական պոեզիան», որտեղ այլոց թարգմանությունների հետ տպագրվել են Բախչինյանի թարգմանությամբ մի հատված «Ռոլանդի երգից» եւ մի շարք բանաստեղծությունների երկերի բազմաթիվ նմուշներ: Դրանց մեջ էր նաեւ Բոդլերի «Չարի ծաղիկներ» թարգմանությունը: Այդ նշանավոր ժողովածուի ամբողջական թարգմանությունը, թարգմանչի գրած առաջաբանով ու ծանոթագրություններով, լույս է տեսել 1990 թվականին: Իսկ «Ռոլանդի երգի» ամբողջական թարգմանությունը՝ Բախչինյանի գրած առաջաբանով եւ ծանոթագրություններով, լույս է տեսել 1995 թվականին:

«Սարգիս Խաչենց» հրատարակչությունը նպաստավոր է եղել Բախչինյանի թարգմանչական գործունեության համար, հրատարակել է Դենի Դիդրոյի արվեստաբանական երկերի ընտրանին հեղինակի թարգմանությամբ եւ առաջաբանով: Ի դեպ, Դիդրոյի եւ Բոդլերի արվեստաբանական ուսումնասիրություններում հայտնի գրական-թարգմանիչը Արթուր Ռեմբոյից կատարել է մի շարք թարգմանություններ, լույս է ընծայել Պոլ Վեռլենի «Ընտիր բանաստեղծությունները», Ալֆրեդ դը Վինյիի «Էլոա եւ այլ էրթվածներ» հատորյակները, Վիկտոր Հյուգոյի «Արեան զվարճանում է» դրամա:

Հենրիկ Բախչինյանը 1980-ական թվականներին մի քանի տարի դասախոսական աշխատանք է կատարել Երեւանի համալսարանի ռոմանագերմանական ֆակուլտետում՝ դասավանդելով ֆրանսիական միջնադարյան գրականություն:

«Դրվագներ ֆրանսիական գրականության պատմության» սույն հատորում զետեղված են երկար տարիների ընթացքում Բախչինյանի կատարած թարգմանական եւ գիտամանկավարժական աշխատանքների արդյունք ընդարձակ ակնարկները, որ հեղինակը կոչել է դրվագներ: Դրանց մի մասն անտիպ է: Դրվագները ստեղծված են հիմնականում ֆրանսիացի եւ ռուս մասնագետների աշխատությունների հիման վրա, ամենեւին չեն հավակնում ինքնուրույն խոր մասնագիտական խոսքի եւ հասցեագրված են ֆրանսիական գրականությամբ հետաքրքրվող հանրությանը, հատկապես ուսանողությանը, գրքի առաջաբանում գրում է Հենրիկ Բախչինյանը:

«Դրվագներ ֆրանսիական գրականության պատմության» նորընծա գիրքը հարստացրեց հայ թարգմանական գրականությունը, որը մեր իրականության մեջ ֆրանսիական մեծ գրականության ճանաչման համար հաճելի նորություն է:

ԱՐՓԻՆԵ ԱՍԼԱՆՅԱՆ

Ադրբեջանը ԼՂ-ում ամեն մի շինություն համարում է «պատմամշակութային հուշարձան»

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ, 13 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի կողմից ժամանակ առ ժամանակ մեղադրվում է ահաբեկչության, թմրամիջոցների անօրինական տեղափոխությունների, իսկ վերջերս նաեւ՝ ադրբեջանական «պատմամշակութային» հուշարձանների ոչնչացման մեջ:

Այդ կապակցությամբ Իլհամ Ալիեւը վերջերս ՄԱԿ-ում հայտարարեց բառացիորեն հետեւյալը. Լեռնային Ղարաբաղում ադրբեջանի ձեւով յուրացնում են Ադրբեջանի պատմությունը, նրա մշակութային ու ճարտարապետական ժառանգությունը: Նրա խոսքերով, ավերվել, թալանվել ու գողացվել են ադրբեջանական կրոնական եւ պատմական հուշարձանները՝ հին ձեռագրեր եւ մշակութային այլ արժեքներ:

Հիշյալ հայտարարությունների առնչությամբ ԼՂՀ հուշարձանների պահպանության վարչության պետ Սլավա Սարգսյանը «Ազատությանն» ասել է, թե կարելի է եւ չարձագանքել Բաքվի հերթական քարոզչական գրոհին, եթե ուշադրություն չգրավեր մի տարօրինակ փաստ:

Երկու տարի առաջ ադրբեջանցիները ներկայացրել են, թե իբր Արցախի եւ ազատագրված, իրենց խոսքերով, «օկուպացված», տարածքներում պահպանվել են 270 հուշարձաններ, այնինչ դրանք ժամանակին անցել են 1500-ից: Դրանք կեղծ թվեր են, որովհետեւ վերոհիշյալ տարածքներում եղել են եւ կան ընդամենը մահմեդական վեց հուշարձաններ. 2-ը՝ Ադդամում, 3-ը՝ Շուշիում եւ 1-ը՝ Խոջալուում: Այստեղ ադրբեջանական ուրիշ հուշարձաններ գոյություն չունեն:

Անիմաստ է այս մասին խոսելը, որովհետեւ տասնյակ հազարավոր հուշարձաններ ունեցող երկիրն ինչո՞ւ պիտի յուրացնի այդ վեց հուշարձանը, որոնք կան եւ կանգուն են: «Եթե մենք ադրբեջանցիների պես ոչնչացնենք հուշարձանները, ինչը նրանք արել են մեր հազարավոր սրբությունների նկատմամբ, ապա մեծ դժվարություն չէ այդ վեց հուշարձանները ոչնչացնելը, ասաց Ս. Սարգսյանը: Դրանք պահպանվում են, ինչպես պահպանվում են մեր հուշարձանները: Ավելին, հայկական շատ հուշարձաններ շատ ավելի վատ են պահպանվում, քան՝ մահմեդականները»:

Ադրբեջանը ՅՈՒՆԵՍԿՕ է ներկայացրել «հուշարձանների» մի մեծ ցուցակ: Հարցն այն է, որ այդ երկիրը «հուշարձան» է համարում իր կառուցած ամեն մի շինություն, խախտելով շինությունները եւ այլ կառույցները հուշարձան համարելու չափանիշները:

Ս. Սարգսյանի խոսքերով, ընդհակառակը, Ղարաբաղին եւ ազատագրված տարածքներին մերձակա գոտիներում ադրբեջանցիները երկրի երեսից սրբում են երեւելի հայկական հուշարձանները: Այսպես, Շահումյանի շրջանի Գյուլիսան գյուղում վերջերս քանդել են 19-րդ դարի կառույց եկեղեցին: Քանի որ հուշարձանները շահարկվում են, նա առաջարկում է հուշարձանների վերաբերյալ կազմել համապատասխան հանձնաժողովներ, որոնք փոխայցելություններ կատարեն եւ տեղում պարզեն հուշարձանների վիճակը:

ՄԵԾԱՐՈՒՄ

Նրա գրքերով եւ ձեռնարկներով այսօր էլ ուսանում են

Երեկ տեղի ունեցավ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ստեփան Մելիք-Բախշյանի ծննդյան 80-ամյակին նվիրված հանդիսությունը: Չարենցի 9 շենքի պատին բացվեց Ստեփան Մելիք-Բախշյանի հուշատախտակը (հեղինակ՝ Գեւորգ Բաղդասարյան): Անվանի գիտնականի մասին խոսեց ԵՊՀ ռեկտոր Ռադիկ Մարտիրոսյանը, որից հետո իրենց ջերմ խոսքերն ասացին համալսարանի պրոռեկտոր Արամ Սիմոնյանը, պատմության ֆակուլտետի դեկան Հայկ Ավետիսյանը, հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչ Բաբկեն Հարությունյանը եւ պատմության ինստիտուտի տնօրեն Ատոմ Մելքոնյանը: Շնորհակալական խոսք ասաց գիտնականի որդին՝ Մհեր Մելիք-Բախշյանը:

ԵՊՀ պատմության ֆակուլտետում տեղի ունեցավ հանդիսության հուշերեկույթ, որին ներկա էին ԿԳ նախարար Սերգո Երիցյանը, Կենտրոն համայնքի քաղաքապետ Գագիկ Բեգլարյանը, Ստեփան Մելիք-Բախշյանի նախկին ուսանողները, կոլեգաները եւ պատմության ֆակուլտետի այսօրվա ուսանողները, որոնք պատմություն առարկան ուսումնասիրում են Ստեփան Մելիք-Բախշյանի գրքերով, ձեռնարկներով:

Երեւանի պետական մանկավարժական համալսարանի կուլտուրայի ֆակուլտետի դեկան, Թեքեյան մշակութային միության նախագահ Ռուբեն Միրզախանյանն ընդգծեց իր նախկին դասախոսի այն հատկանիշը, որ նա առանց պարտադրելու սիրում էր ուսանողին հետաքրքրվել առարկայով:

Ելույթները ջերմ էին՝ առանց կեղծ նոտաների եւ դիպուկ էին ներկայացնում Ստեփան Մելիք-Բախշյանին ոչ միայն որպես լավ մարդու, մանկավարժի, այլեւ որպես մեծ գիտնականի:

ԳՈՌՈՒՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Կնոջ հայացքը

«Ակադեմիա» պատկերասրահում ցուցադրվող աշխատանքների հեղինակը՝ Արեւիկ Արեւշատյանը, նկարչական աշխարհին այնքան էլ ծանոթ անուն չէ: Ավարտել է Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանը, աշխատել է Մխիթար Սեբաստացու անվան կրթօջախում, 2003-ից մասնակցել է անհատական եւ խմբակային մի շարք ցուցահանդեսների՝ հարելով նորարարական արվեստի ուղղությանը: Հետաքրքրություն-նախասիրությունները թատերական ձեւավորումների, ինստալյացիայի, ֆոտովիդեո աշխատանքներում են դրսեւորել, ինչը երեւում էր ցուցասրահում ներկայացված գեղանկարչական աշխատանքներում: Լուսանկարչական ճշգրիտ արտահայտություններով այդ նկարաշարը՝ «Ստեղծության ծաղիկներ» պայմանական խորագրով (ըստ պատկերասրահում վաճառվող կատալոգի), բաղկացած է երեք բաժիններից՝ «Մագնետիզմ» (ձգողականություն, որով օժտված է կինը), «Պատմություններ կանանց մասին» (աշխարհում՝ կին երեւույթի նշանակությունը, դերը, հատկապես՝ ստեղծագործողի, որն արտահայտված էր ծաղկի սիմվոլի միջոցով՝ ծաղկի առէջների, ներքին օրգանների, ծաղկի հայացքի մեջ) եւ «Ոչնչի մասին»: Կարեւորելով նկարների զուտ էսթետիկական կողմը, դրանք առհասարակ զրկված էին զգացմունքից ու շարժումից՝ անհաղորդ ու չեզոք: Թերեւս կնոջ եւ նրա ստեղծած մշակույթը գնահատելու խնդիր էր դրված՝ տարօրինակ մի մտայնությամբ՝ կինը կին հեղինակի գիրք կկարդա՞, կամ կգնա՞ կնոջ ցուցահանդես: Մի փիլ արտաքոց է թվում, բայց հոգեբանորեն գուցե պատճառաբանվա՞ծ է:

Մ. Ռ.

Ալլա Պուգաչովան իր դղյակը կառուցել է արգելագոտում

Ռուս հանրաճանաչ երգչուհի Ալլա Պուգաչովայի Սոլնիչնագորսկ մերձմոսկովյան շրջանում կառուցած բաղնիքը գտնվում է Ինստրինսկի ջրամբարի ջրային հսկողության տարածքում՝ 40 մետր ջրային կտրվածքից հեռու, որը խիստ խախտում է ըստ բնապահպանության օրենսգրքի: Այդ մասին երեկ լրագրողներին հայտարարել է Օլեգ Միտվոլը՝ բնօգտագործման բնագավառի եւ ֆեդերալ վերահսկողության ծառայության ղեկավարի տեղակալը: Նա տեղեկացրել է, որ երգչուհին Բերեժկա գյուղում տնօրինում է 4 հեկտար տարածք, որտեղ կառուցված է 84 քմ տուն եւ 29 քմ բաղնիք, որն այս պահին օգտագործվում է որպես հյուրասենյակ: Ըստ նրա, երկու շինություններն էլ կառուցվել են արգելված գոտում եւ ենթակա են քանդման:

Միտվոլը հայտնել է, որ մինչեւ այժմ բնապահպանության նախարարության վերահսկիչները չեն կարողանում մտնել երգչուհու տարածք, որպեսզի խախտումների մասին համապատասխան ակտեր գրեն եւ եթե երկու շաբաթվա ընթացքում կրկին նրանց չհաջողվի, «ապա մենք կդիմենք իրավապահներին, քանի որ օրենքի առաջ բոլորն են հավասար՝ առանց բացառության...», ասել է Միտվոլը:

ՌԱՖԻԿ ՌԱՖԱԵՅԱՆ

Առաջին իսկ ոտքերից պարզ դարձավ, որ տեխնիկապես գագաթ ու արագաշարժ չեխերը հարձակման գծում հիմնականում փորձելու են գնդակներ մատակարարել բարձրահասակ Կոլերին, որը ողջ հանդիպման ընթացքում բազմիցս տաճություններ պատճառեց մեր դարպասապահին ու պաշտպաններին: Ցավոք, մեր ֆուտբոլիստներին այդպես էլ չհաջողվեց վնասազերծել Կոլերին: Եվ եթե վերջինս մի փոքր հաշվենկատ գործեր, ապա այս խաղում կարող էր դառնալ առնվազն 5 գոլի հեղինակ:

Հայաստան-Չեխիա՝ 0–3 (0–2)

13 հոկտեմբերի, «Հանրապետական» մարզադաշտ, 5 հազար հանդիսական:

Մրցավար՝ Յարեկ Գրանաս (Լեհաստան):

Հայաստան-Ադուլա Բեսե, Եղիշե Մելիքյան, Կարեն Դոխոյան (Արթուր Մկրտչյան, 46), Սարգիս Հովսեփյան, Հարություն Վարդանյան, Արթուր Պետրոսյան, Ռաֆայել Նազարյան, Համլետ Մխիթարյան, Արմեն Շահգելդյան (Անդրեյ Մովսիսյան, 81), Էդգար Մանուչարյան, Կարեն Ալեքսանյան (Ալբերտ Սարգսյան, 64):

Չեխիա-Պետր Չեխ, Զդենեկ Գրիգերա, Թոմաշ Գալաշեկ (Ռադոսլավ Կովաչ, 57), Ռենե Բոլֆ, Մարեկ Յանկուլովսկի, Յան Կոլեր (Վրատիսլավ Լոկվենց, 83), Թոմաշ Ռոսիցկի, Շտեֆան Վահուրեկ (Իրժի Յարոշիկ, 73), Մարեկ Հայնց, Լիբոր Սիոնկո, Թոմաշ Ույֆալուշի:

Գոլերը՝ Կոլեր (3, 77), Ռոսիցկի (31):

Զգուշացվեցին Մելիքյանն ու Մկրտչյանը:

Կոլերին վնասազերծել այդպես էլ չհաջողվեց

Հյուրերի առաջին իսկ գրոհը կարող էր ավարտվել դարպասի գրավմամբ: Կոլերի հետ օդային մենամարտում Բեսեն չկարողացավ տիրել գնդակին եւ չեխ հարձակվողը գնդակն ուղարկեց անպաշտպան դարպասը: Սակայն վերջին պահին Մելիքյանն այն դուրս հանեց դաշտակ դարպասից: Չեխերի հաջորդ գրոհն արդեն գոլային ավարտ ունեցավ. Կոլերը գլխի դիպուկ հարվածով խոցեց Բեսեի պաշտպանած դարպասը: Բաց թողած գոլից հետո Հայաստանի հավաքականի ֆուտբոլիստներին հաջողվեց մի քանի վտանգավոր գրոհներ ձեռնարկել: Առջեւի գծում գործում էին Մանուչարյանն ու Շահգելդյանը, որոնց գրոհների ժամանակ ակտիվորեն աջակցում էին Մխիթարյանը, Պետրոսյանն ու Նազարյանը: Դաշտի տերերը գոլ խփելու երկու հիանալի հնարավորություն ունեցան: Երկու դեպքում էլ հարվածային դիրքում հայտնվեց Էդգար Մանուչարյանը: Առաջին դրվագում նրա հարվածից հետո գնդակը դիպչելով հորիզոնական ձողին՝ դուրս եկավ դաշտից, իսկ երկրորդ դրվագում գնդակը թեեւ հայտնվեց դարպասում, սակայն մինչ այդ եզրային մրցավարը բարձրացրել էր դրոշակը:

Կոլերն ավերներ է գործում:

PHOTOLUR

Հյուրերը բավական ակտիվորեն շարունակում էին գրոհել՝ հիմնականում գրոհները զարգացնելով աջ թեւով: Մինչեւ առաջին խաղակեսի ավարտը նրանք չորս անգամ մոտ էին հաջողությանը: Երկու դեպքում մեր թիմին հրաշքով գոլից փրկեց Բեսեն, իսկ Սիոնկոն ու Կոլերը նպատավոր դիրքերից վրիպեցին: Այնուամենայնիվ, չեխերը երկրորդ անգամ հասան հաջողության: Անհասկանալի վարպետությամբ փայլեց Ռոսիցկին, որը մոտ 25 մետրից հուժկու հարվածով գնդակն ուղարկեց դարպասի վերին անկյունը:

Ընդմիջումից հետո խաղի պատկերը չփոխվեց: Թեեւ Հայաստանի հավաքականի ֆուտբոլիստները շարունակում էին մրցակցի դարպասը գրավելու ուղիներ փնտրել, սակայն այդպես էլ չկարողացան գեթ մեկ անգամ հասնել հաջողության: Ամենավտանգավոր պահը թերեւս ստեղծվեց խաղավերջում, երբ Մանուչարյանը նպատավոր դիրքից բարձր հարվածեց: Իսկ ահա հյուրերը բազմիցս կարող էին գրավել դաշտի տերերի դարպասը: Երկու անգամ սեփական կիսադաշտում կորցրեն սխալվեց Վարդանյանը եւ Կոլերն ու Սիոնկոն մեն-մենակ հայտնվեցին Բեսեի դիմաց: Սակայն վերջինս փրկեց դրությունը: Ընդհանրապես այս խաղում Բեսեն իրեն լավագույն կողմերով դրսեւորեց եւ եթե չլիներ նրա վստահ խաղը, ապա հաշիվն անկասկած ավելի խոշոր կլիներ: Միայն Կոլերը մի քանի անգամ մեն-մենակ հայտնվեց Բեսեի դիմաց, սակայն հապաղեց եւ չօգտագործեց գոլ խփելու հիանալի հնարավորությունը: Ճիշտ է, 77-րդ րոպեին նա ի վերջո երրորդ անգամ ստիպեց դաշտի տերերին խաղն սկսել կենտրոնից:

Այսպիսով, Հայաստանի հավաքականը չորրորդ անընդմեջ պարտությունը կրեց: Մեր հավաքականի խաղում կրկին բացակայում էր հստակությունը, պաշտպանական օղակը դարձյալ գործեց անփույթ ու բազում սխալներով, հարձակման գծի խաղացողներն էլ չկարողացան լրջորեն սպառնալ մրցակցի դարպասին: Մեր հավաքականն ընտրական առաջին խմբում եզրափակում է աղյուսակը: Նույնիսկ Անդորրայի հավաքականը, որին համարում էին խմբի բացահայտ հետնապահ, այս տուրում 1–0 հաշվով հաղթեց մակեդոնացիներին:

Հերթական դառը հիասթափությունը

Տամպերեում Հայաստանի երիտասարդական հավաքականի տոնած հաղթանակը չեխերի հետ երեւանյան խաղում ֆուտբոլասերներին լավատեսորեն էր տրամադրել: Սակայն դարձյալ նրանց սպասելիքները չարդարացան: Ավելին, Հայաստանի հավաքականի խաղը խոր հիասթափություն պատճառեց: Արդեն 3-րդ րոպեին մեր պաշտպանների անփույթ խաղի պատճառով հյուրերի երկու ֆուտբոլիստներ հայտնվեցին դարպասի դիմաց եւ չեխերի ավագ Թոմաշ Շիվոկն անարգել բացեց հաշիվը: Թվում էր, թե մեր հավաքականին կհաջողվի կարգավորել խաղը եւ վերականգնել հավասարակշռությունը: Սակայն ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, մեր երիտասարդները ֆուտբոլային բոլոր առումներով ակնհայտորեն զիջում էին մրցակցին: Այդպես էլ ողջ խաղի ընթացքում հայ ֆուտբոլիստների կատարմամբ ականատես չդարձնի որեւէ մտածված կոմբինացիայի: Խաղային օղակների միջեւ բացակայում էր համագործակցությունը, հարձակողական գործողություններում հստակություն չկար, կոպիտ սխալներով էին գործում մեր պաշտպանները: Փաստորեն ողջ հանդիպման ժամանակ մեր հավաքականը գոլային միայն մեկ պահ ստեղծեց, երբ Մխիթար Գրիգորյանի հարվածից հետո գնդակը դիպավ դարպասաձողին: Իսկ ահա չեխերը բազում գոլային պահեր ստեղծեցին եւ եթե մի փոքր ավելի հաշվենկատ գործեին, ապա ոչ թե 4, այլ 7–8 գնդակ կխփեին մեր թիմի դարպասը: Հատկապես վտանգավոր էին հյուրերի անկյունային հարվածների խաղարկումները, որոնցից հետո մշտապես վտանգավոր պահ էր ստեղծվում ՀՖ հավաքականի դարպասին: Մեր ֆուտբոլիստները որոշես կանոն տանով էին տալիս օդային մենամարտերը: Անվստահ խաղաց նաեւ դարպասապահ Էդգար Գասպարյանը:

Եթե առաջին խաղակեսում մեր ֆուտբոլիստները որոշ չափով կարողացան դիմադրել եւ ընդամենը մեկ գոլ ընդունեցին սեփական դարպասը, ապա ընդմիջումից հետո եւս 3 անգամ գնդակը հայտնվեց մեր ընտրանու դարպասում: Կրկին աչքի ընկավ Շիվոկը, 2 գոլ էլ խփեց Ֆիլիպ Տրոյան:

Ընտրական առաջին խմբում կայացած մյուս խաղում հոլանդացիները սեփական հարկի տակ 4–1 հաշվով պարտության մատնեցին ֆիններին: Ընտրական մրցաշարում կայացած մնացած հանդիպումներում գրանցվել են հետեւյալ արդյունքները. Մոլդովա-Շոտլանդիա՝ 0–0, Սերբիա-Սան Մարինո՝ 9–0, Ուկրաինա-Վրաստան՝ 6–0, Ղազախստան-Ալբանիա՝ 0–1, Իսլանդիա-Շվեդիա՝ 3–1, Բուլղարիա-Մալթա՝ 2–1, Լատվիա-Էստոնիա՝ 0–0, Դանիա-Թուրքիա՝ 1–1, Լիտվա-Իտալիա՝ 1–1, Նորվեգիա-Սլովենիա՝ 0–0, Գերմանիա-Ավստրիա՝ 2–0, Ուելս-Լեհաստան՝ 2–2, Կիպրոս-Ֆրանսիա՝ 0–1, Ադրբեջան-Անգլիա՝ 0–0, Իտալիա-Բելառուս՝ 2–1, Պորտուգալիա-Ռուսաստան՝ 2–0:

Մրցաշարային աղյուսակ

1-ին խումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Չեխիա	3	2	1	0	8–1	7
2. Հոլանդիա	3	2	1	0	6–1	7
3. Ռումինիա	3	2	0	1	7–5	6
4. Մակեդոնիա	3	1	0	2	5–7	3
5. Ֆինլանդիա	4	1	0	3	2–6	3
6. Հայաստան	4	1	0	3	1–9	3

ՇԱԽՄԱՏ

Համակարգիչների փայլուն հաղթանակը

Իսպանական Բիլբաո քաղաքում ավարտվեց շախմատային յուրօրինակ մրցախաղը գրոսմայստերների եւ համակարգիչների միջեւ: Արհեստական ինտելեկտը հաստատեց իր առավելությունը շախմատիստների նկատմամբ՝ հասնելով փայլուն հաղթանակի (8,5-3,5): Հիշեցնենք, որ արդեն մեկնարկային տուրում համակարգիչները 2 հաղթանակ էին տոնել, մեկ պարտիա ավարտել ոչ-ոքի: Երկրորդ տուրում գրոսմայստերներին հաջողվեց առավելության հասնել: Մերգեյ Կարյակինը հիանալի ոճով հաղթեց Junior-ին: Թոփալովը, թեեւ առավելություն էր ստացել Hydra-ի նկատմամբ, սակայն չկարողացավ այն իրացնել: Ոչ-ոքի գրանցվեց նաեւ Պոնոմարյովի եւ Fritz-ի մրցավեճում: 3-րդ տուրում երկու պարտիաներում սպիտակներով խաղում էին համակարգիչները, որոնք հասան հաղթանակի: Միայն Պոնոմարյովին հաջողվեց կես միավոր վաստակել Jinior-ի հետ մրցավեճում: Ավարտական տուրում արդեն գրոսմայստերներից երկուսն էին խաղում սպիտակներով, սակայն դա նրանց հաջողություն չբերեց: Կարյակինը սպիտակներով զիջեց Fritz-ին, իսկ Թոփալովը ոչ-ոքի խաղաց Junior-ի հետ: Պոնոմարյովը սեւ խաղաքարերով պարտվեց Hydra-ին:

Այսպիսով, 12 պարտիաներում գրոսմայստերները վաստակեցին ընդամենը 3,5 միավոր (Թոփալովը՝ 1,5, Կարյակինը, Պոնոմարյովը՝ 1-ական), տոնելով ընդամենը մեկ հաղթանակ (Կարյակին): Համակարգիչներից բոլորից հաջող հանդես եկան Hydra-ն եւ Fritz-ը, որոնք վաստակեցին 3,5-ական միավոր: Junior-ն իր հաշվին գրանցեց 1,5 միավոր:

Ամերիկացի լողորդների հարուստ ավարը

Ինդիանապոլիսում ավարտված լողի աշխարհի առաջնությունում հիանալի հանդես եկան ամերիկացի լողորդներն՝ արժանանալով խաղարկվող պարգեւների մեծ մասին: 25 մետրանոց լողավազանում անցկացված մրցումներում ԱՄՆ-ի մարզիկները թիմային ընդհանուր հաշվարկով գրավեցին առաջին տեղը՝ նվաճելով 21 ոսկե, 10 արծաթե եւ 10 բրոնզե մեդալ: Այս ցուցանիշը ռեկորդային է աշխարհի առաջնությունների պատմության ընթացքում: Մինչ այդ բոլորից շատ ոսկե մեդալ (12) էին նվաճել ավստրալացի լողորդները 1995 թ. աշխարհի առաջնությունում: Ընթացիկ առաջնությունում ավստրալացիները նվաճեցին 29 մեդալ (7 ոսկե, 15 արծաթե, 7 բրոնզե) եւ զբաղեցրին 2-րդ տեղը: Երրորդը ճանաչված անգլիացիներն արժանացան ընդամենը 5 մեդալի (2 ոսկե, 3 արծաթե): Չորրորդը ռուս լողորդներն էին՝ 2-ական ոսկե եւ բրոնզե մեդալ: Ռուսներից աշխարհի կրկնակի չեմպիոն դարձավ 20-ամյա Յուրի Պրիլուկովը:

Ինդիանապոլիսում աչքի ընկան առանձին լողորդներ: Ամերիկուհի լողորդուհի Ջեյթլին Սանդենոն առաջնությունում 4 ոսկե մեդալ նվաճեց: 34-ամյա անգլիացի Մարկ Ֆոստերը 4-րդ անգամ հաղթող ճանաչվեց 50 մ ազատ լողաոճում: Առաջին անգամ վետերան լողորդը նման հաջողության էր հասել 1993 թ.՝ հետագայում այն կրկնելով 1999 եւ 2000 թթ.: Եվս երկու անգամ (1997 եւ 2002 թթ.) Ֆոստերը վերջնագիծը հասել էր 2-րդը: 50 մ բատերֆլայ լողաոճում 3-րդ անգամ չեմպիոնուհու տիտղոսը նվաճեց ամերիկուհի Ջենի Թոմփսոնը:

Մրցախաղը կկայանա Դուբայում

Մինչ Կրամնիկն ու Լեկոն Բրիսբեյնում որոշում են աշխարհի միասնական առաջնության կիսաեզրափակիչի առաջին մասնակցին, հայտնի է դարձել մյուս զույգի մրցախաղի անցկացման վայրը: ՖԻԴԵ-ի վարկածով աշխարհի ներկայիս չեմպիոն Ռուսլան Կասիմջանովի եւ շախմատիստների դասակարգման ցուցակի առաջատար Գարի Կասպարովի մրցախաղը կկայանա 2005 թ. հունվարին Դուբայում: Մրցախաղի մրցանակային ընդհանուր հիմնադրամը 1,2 մլն դոլար է: Այն կանցկացվի Մուհամեդ Ալ Մակտում Շեյխի հովանու ներքո:

Դեռեւս օգոստոսի 5-ին ՖԻՖԱ-ն մրցամարտն անցկացնելու վայրի մրցույթ էր հայտարարել: Մրցամարտը կազմակերպելու ցանկություն ունեցող քաղաքների ներկայացուցիչները պետք է մինչեւ սեպտեմբերի 15-ը հայտ ներկայացնեին՝ ապահովելով նվազագույնը 1 մլն դոլարի մրցանակային հիմնադրամ: Թեկնածուները երեքն էին՝ Տաշքենդը, Լոնդոնը եւ Դուբայը:

Սարգսյանը դուրս մնաց պայքարից

Մոսկվայում անցկացվող թենիսի «Կրեմլի գավաթի» խաղարկությունում կայացան 2-րդ փուլի հանդիպումները: Անհաջողության մատնվեց Սարգիս Սարգսյանը՝ զիջելով ռուսաստանցի Նիկոլայ Դավիդենկոյին: Առաջին խաղափուլում Սարգիսը պարտվեց 2-6 հաշվով: Երկրորդում թեեւ ընդհանուր առմամբ հավասար պայքար ընթացավ, սակայն ի վերջո ռուս թենիսիստը կրկին հաղթեց (6-4)՝ շահելով մրցախաղը: Հաջորդ փուլի ուղեգիր են նվաճել նաեւ Վոլչկովը, Ստեպանեկը, Վոլանդրին, Բյորկմանը, Անդրեեւը:

Կանանց պայքարում հաջող են հանդես գալիս ռուսաստանցիներ Պետրովան, Դեմենտեւան, Լիխովցեւան, Բովինան, Սաֆինան, որոնք հաղթահարեցին 2-րդ փուլի արգելքը: Հաջորդ փուլ մտավ նաեւ Վինուս Ուիլյամսը՝ հաղթելով Ժիդկովային (6-4, 6-4):

Մարզաձեւերի քանակը կմնա անփոփոխ

ՄՕԿ-ը սկսել է Աթենքի օլիմպիական խաղերում ընդգրկված 28 մարզաձեւերի վարկանիշների ուսումնասիրումը: Դրանց արդյունքների հիման վրա հնարավոր են փոփոխություններ 2012 թ. օլիմպիական խաղերի ծրագրում: Հնարավոր է, որ օլիմպիական մարզաձեւ դառնան գոլֆը, ռեգբին, սկվոշը, կարատեն եւ անվավոր չմշկավազքը: ՄՕԿ-ի նախագահ Ժակ Ռոգեն հայտարարել է, որ եթե նույնիսկ փոփոխություններ կատարվեն, միեւնույն է, օլիմպիադայի ծրագրում մարզաձեւերի թիվը (28) մնալու է անփոփոխ:

Կրկին ոչ-ոքի

Բրիսբեյնում Վլադիմիր Կրամնիկի եւ Պետեր Լեկոյի մրցախաղի 11-րդ պարտիան կրկին խաղաղ ավարտ ունեցավ: Սպիտակներով խաղում էր հունգարացի գրոսմայստերը: Այս անգամ էլ մրցակիցները հաղթանակի հասնելու ուղիներ չգտնելով, արդեն 17-րդ քայլում խաղաղ դաշն կնքեցին: Մրցախաղը 6-5 հաշվով շահում է Լեկոն: Մրցամարտի ավարտին մնացել է 3 տուր: Եթե մրցամարտն ավարտվի ոչ-ոքի, ապա հաղթող կճանաչվի Կրամնիկը: Այնպես որ, ռուսաստանցի շախմատիստն ավարտական տուրերում պետք է աշխատի գոնե մեկ հաղթանակ տոնել:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Ծանուցում

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Հասարակական կազմակերպություններ 2004» համաժողով եւ ցուցահանդես

Կրթությամբ զարգացման ակադեմիան **(AED)**, «Համաշխարհային ուսուցման» **(World Learning)** եւ Ամերիկայի հայկական համագումարի Հասարակական կազմակերպությունների ուսուցման եւ տեղեկատվական միջոցների կենտրոնի **(AAA NGO Center)** հետ համատեղ, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության հայաստանյան առաքելության **(USAID/Armenia)** ֆինանսական աջակցությամբ կազմակերպում է «Հասարակական կազմակերպություններ 2004» համաժողով եւ ցուցահանդես, որոնք կկայանան ***հոկտեմբերի 15-17-ը***՝ Կառավարության շենքի նիստերի դահլիճում, փ. Երեւան Մելիք-Ադամյան 1 հասցեով:

Միջոցառմանը կմասնակցի 283 հասարակական կազմակերպություն հանրապետության բոլոր մարզերից, որոնք կներկայացնեն իրենց կողմից իրականացվող ծրագրերը, ծառայությունները եւ խնդիրները, ինչպես նաեւ կխնդրեն պետական, մասնավոր եւ հասարակական կառույցների միջեւ համագործակցության ստեղծման ու ամրապնդման նոր ուղիները:

Միջոցառմանը կմասնակցեն նաեւ հանրապետության ղեկավար մարմինների բարձրաստիճան պաշտոնյաներ, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, փորձագետներ:

Ցուցահանդեսը կներկայացնի ՀԿ-ների գործունեության հետեւյալ ոլորտները՝ տնտեսական զարգացում, երիտասարդության, կանանց/գենդերային, հաշմանդամների, համայնքի զարգացման, մարդու իրավունքների, առողջապահության, սոցիալական, աղետի եւ մշակույթի, կրթության ու շրջակա միջավայրի հիմնահարցեր:

Բոլոր շահագրգիռ անձանց ու կազմակերպությունների համար ցուցահանդեսի մուտքն ազատ է ***հոկտեմբերի 15-ի ժ. 13:00-ից*** սկսած:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել (3741) 26 69 36, 26 69 87 հեռախոսահամարներով:

AED

ՀԱՄԱԲԱԿԱՑՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ ջրային տնտեսության կառավարման գործակալության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն ծանուցվում է **ՀՀ Վայոց Ձորի մարզի Սարավան համայնքի** վարչական տարածքում «**Ֆիրմա ԳԱՆ**» ՍՊԸ-ի կողմից Դարբ գետի վրա կառուցվող «Սարավան-ՀԷԿ-ի ջրառի ջրօգտագործման թույլտվությունների նախագիծը:

Գործունեությունից առաջացած կեղտաջրերը թափվում են հարակից կոլեկտոր կոլեկտոր եւ հետագայում գետ:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են ափսեանային օրերին, ժամը 17-18-ը դիմել ՀՀ ջրային տնտեսության կառավարման գործակալություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի քննարկումը տեղի կունենա 2004 թ. հոկտեմբերի 25-ին, ժամը 16:00-ին, Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

ՀՀ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱԲԱԿԱՑՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ ջրային տնտեսության կառավարման գործակալության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն ծանուցվում է **«Ախանի առի կոմբինատ»** ՓԲԸ-ն առատրական նպատակով ստորերկրյա ջրային օբյեկտներից 2,5 լ/վրկ ջրառի ջրօգտագործման թույլտվությունների նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են ափսեանային օրերին, ժամը 17-18-ը դիմել ՀՀ ջրային տնտեսության կառավարման գործակալություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի քննարկումը տեղի կունենա 2004 թ. հոկտեմբերի 25-ին, ժամը 16:00-ին, Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

ՀՀ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի նիստում

Կենտրոնական բանկի խորհուրդը հոկտեմբերի 12-ի նիստում հաստատեց «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները», «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից վերստուգվող անձի մոտ ստուգում իրականացնելու ընթացքում վերստուգող խմբի ղեկավարի կողմից վերստուգվող անձի առանձին ծառայողական տարածքների կնքման ակտի ձեւը», «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից վերստուգվող անձի մոտ ստուգում իրականացնելու ընթացքում վերստուգվող անձի, նրա ղեկավարների կամ այլ ներգրավյալների կողմից ստուգմանը խոչընդոտելու դեպքում վերստուգող խմբի ղեկավարի կողմից կազմվող արձանագրության (ակտի) ձեւը», «ՀՀ տարածքում գործող վարկային կազմակերպությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանը» եւ «ՀՀ տարածքում գործող վարկային կազմակերպությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանի կիրառման հրահանգը»՝ նոր խմբագրությամբ:

Խորհրդի որոշմամբ լրացումներ կատարվեցին «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից թողարկվելիք հուշադրամների թեմաների ցանկը, ինչպես նաեւ 2004-2005թթ. հուշադրամների թողարկման ծրագիրը եւ հուշադրամների չափանիշները հաստատելու մասին» որոշման մեջ, որի համաձայն 2004-2005թթ. թողարկվելու են Հայաստանի Հանրապետության զինված ուժերին նվիրված ոսկե եւ արծաթե հուշադրամներ, համապատասխանաբար 10.000 դրամ եւ 100 դրամ անվանական արժեքով:

ԿԲ խորհուրդը պաշտոնական պարզաբանում տվեց «Բանկում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու կամ ղեկավար պաշտոն զբաղեցնելու ուղեցույցի» 5-րդ կետի կիրառման վերաբերյալ:

Խորհուրդը որոշեց գրանցել «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ «Վանաձոր-Ագրո» մասնաճյուղի գործունեության դադարեցումը, արտժույթի առք ու վաճառքի լիցենզիաներ տրամադրել «ԵՐԵՔ ՅՈԹ-777» առեւտրային կազմակերպությանը, «ՊԱ-Լ.Ա.Ս.» ՍՊԸ-ին, «Մանվել եւ Ընկերներ» ՍՊԸ-ին, թույլատրել Շավարշ Մալաքյանին փոխել արտժույթի փոխանակման կետի գործունեության վայրը:

ՀՀ ԿԲ մամուլի ծառայություն

ՀՀ Կենտրոնական բանկը տեղեկացնում է

ՀՀ ԿԲ խորհուրդը հոկտեմբերի 1-ի որոշմամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2004 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվության վերստուգումն իրականացնելու նպատակով ընտրել է «Գրանթ Թորնթոն» աուդիտորական կազմակերպությանը:

ՀՀ ԿԲ մամուլի ծառայություն

LOG ON TO

www.azg.am

IN ARMENIAN, RUSSIAN, ENGLISH AND TURKISH

ԱՌԱՋԻՆ ԼՈՒՐԸ՝ ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈ «ՌԱԴԻՈԼՈՒՐ»

լրատվական-վերլուծական ծրագիր

ամեն օր՝ ուղիղ եթերում

ժամը 6.00, 8.00, 10.00, 11.00, 12.00, 13.00, 14.00, 15.00 (հայերեն եւ ռուսերեն),17.00, 18.00, 22.00, 23.00

Օդերաշիվ լրատվություն՝

On-line ռեժիմով

www.armradio.am

Վիեննայով դեպի ողջ աշխարհ

ՆՈՐՈՒՅԹ՝ ԵՆԹԱԹԸ 5x

Նոյեմբերի 1-ից սկսած

A STAR ALLIANCE MEMBER

Ծանեք մղոններ "Miles & More" ծրագրով

սկսած՝ $ 559*
Վիեննա եւ եվրոպական այլ քաղաքներ

սկսած՝ $ 859*
Միացյալ Նահանգներ

սկսած՝ $ 899*
Կանադա

սկսած՝ $ 1549*
Ավստրալիա

* Համարժեքը դրամով, հարկերն ու տուրքերը ներառված չեն, գործում են հատուկ պայմաններ:

Ուղեւորների առավել ճկուն տեղափոխության համար «Ավստրիական ավիաուղիներն» այժմ առաջարկում է շաբաթական իր 5-րդ թռիչքը:
Նոյեմբերի 1-ից սկսած Դուք կարող եք Երեւանից Վիեննա ուղեւորվել շաբաթվա բոլոր օրերին՝ բացի շաբաթ եւ կիրակի օրերից:
Այսուհետեւ Դուք կարող եք Երեւանից 559 դոլարով մեկնել Վիեննա եւ անվճար շարունակել ուղեւորությունը եվրոպական 12 այլ քաղաքներ՝ Փարիզ, Լոնդոն, Ամստերդամ, Ֆրանկֆուրտ, Պրահա եւ այլուր:
Եվրոպայում ամենաարագ եւ հարմար փոխատեղման կենտրոնը՝ Վիեննայի օդանավակայանը հանդիսանում է Ձեր առաջին դարպասը դեպի եվրոպական այլ վայրեր, Հյուսիսային Ամերիկա, Ասիա եւ Ավստրալիա, միացնելով Ձեզ ավելի քան 130 քաղաքների հետ:
Վայելեք ավստրիական հոչակավոր հյուրընկալությունը եւ բիզնես կարգում մեր մրցանակակիր ծառայությունները թռիչքի ողջ ընթացքում:

Հավելյալ տեղեկությունների համար դիմել մեր գրասենյակ՝ www.austrianairlines.am, ☎ 51 22 01 կամ Ձեր նախընտրած ավիագործակալությանը:

Vienna International Airport
EUROPE'S BEST ADDRESS

Austrian

ԱՄԵՐԻԿՅԱՆ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆԸ ՐՈՒՎԻՐՈՒՄ Է ԱՃՈՒՐԴԻ

ԱՃՈՒՐԴԻ են հանվում ամերիկյան կահույք, էլեկտրասարքեր, մեքենաներ եւ գեներատորներ (միաֆազ եւ եռաֆազ): Աճուրդային վաճառքը կկայանա **հոկտեմբերի 23-ին եւ 24-ին ժամը 10:00-16:00** կամ էլ մինչեւ ապրանքների ամբողջական իրացումը ԱՄՆ դեսպանատան Արարատյան 90 հասցեում գտնվող պահեստում (մուտքը Շահրուի փողոցի կողմից, որը հայտնի է նաեւ որպես Շահվերդյան փողոց: Ապրանքների զննումն անվճար է եւ կատարվում է տեղում՝ շաբաթ օրվանից սկսած: Լոտերը վաճառվելու են այնպես, ինչպես կան (***ԱՄՆ դեսպանատունը վաճառքի հանված ապրանքների որակի վերաբերյալ երաշխիքներ չի ապահովում***): Տեղում կվաճառվեն զովացուցիչ ըմպելիքներ ու ուտեստներ: Այն ֆիզիկական անձինք, ովքեր մախային վճարումներից զերծ գնումներ կատարելու իրավունք չունեն, պարտավոր են ապրանքը գնելուց հետո ՀՀ համապատասխան մարմինների հետ կարգավորել հարկային եւ մախային վճարումների հետ կապված հարցերը:

Ուշադրություն. կիրառվելու է աճուրդային վաճառքի նոր ձեւ, որը թույլ կտա գնել միայն մի բան: Եթե ուզում եք գնել մեկ հատ աթոռ, ապա ԳՆԵՔ ՄԻԱՅՆ ՄԵԿ ԱԹՈՌ: Եթե ուզում եք գնել մեկ հատ սառնարան, ապա ԳՆԵՔ ՄԻԱՅՆ ՄԵԿ ՍԱՌՆԱՐԱՆ: Այս աճուրդը մեծածախ վաճառք չէ:

Մանրամասն տեղեկությունների համար կարող եք զանգահարել ԱՄՆ դեսպանատուն Ռոբերտ Քրումին, Սվետլանա Հարթին կամ Արաքսեա Չոմոյանին հետեւյալ հեռախոսահամարներով. **527001, 524840, 524872:**

ԳՈՎԱՍՊԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-24-63

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բագրատունեաց 70ա Գրանցման թիւ՝ 65, դասիչ՝ 69150 Տպաքանակը՝ 3000 Ստորագրած է տպագրության՝ 13.10.2004 Գինը՝ 100 դրամ